

# ԼՈՅՍ

ՕԾՅ՝ ԻձձՁ՝ ԸԿՅ՝  
 »ձ  
 ՌՅ՝ էՅ՝ ճՅ՝ ԻՅ՝ ԻՅ՝ ԿՅ՝  
 »ճԻՅ՝ յՅ՝ ՁՅ՝ ՁՅ՝ճՅ՝

Չ՝ ճԻ՝ ԸԿՅ՝ Ի՝ շճ՝ »ձ՝ · ԻԸՅ՝ ձձճ՝  
 Ը՝ Ըճ՝ · Շճ՝

Յ՝ձ՝ · Չ՝ ձճ՝ էՅ՝ ճճ՝Յ՝ ԿՅ՝

Օձձձ՝ Յ՝ ճԻձձ՝ ՌՅ՝ ԸՅ՝ ճ՝  
 1 5 1 7 5 - 1 1 7  
 Ձձ՝ճճ՝Յ՝ ԿՅ՝ - Ձճճ՝Յ՝

Ձձ՝էՅ՝ Ըձձ՝ 6 4 9 5 1 8 0

E-mail : louys@dpir.com

Համար 3  
 30 Ապրիլի , 2000թ.

Գինը՝ 3000 ռիալ

# LOUYS

Armenian Cultural  
 and Social Biweekly

No. 3 , 30 April, 2000

Editor-in-Chief  
 Ed. Baghdasarian

POBox 15175-117  
 Tehran - Iran  
 Tel. (0098 - 21) 6495180  
 E-mail : louys@dpir.com

## ՝ ձձ՝ Յ՝ձ՝ ԻձձՁձ՝

- Պատմութեան էջերից.....2
- Լուրեր.....3-7
- Սփիւռք՝ ԳՂԿԽ 30.....8-9
- Հասարակական՝ Ինչո՞ւ.....10-11
- Խոհեր.....11
- Հարցազրոյց Լ. Եզնաւորեանի հետ.....12-13
- Հարցազրոյց՝ «Հրաշամանուկը».....14
- Հայկական հարց.....15
- Օրինակելիները չեն մոռացում.....15
- Իրանահայ դէմքեր՝ Հայկ Գարազաշ.....16-17
- Գրական էջ.....18-19
- Առողջապահական.....20-21
- Ձեր իրական տարիքը.....22

## ä՝ ճձձ՝ »ճձ՝ ԿՅ՝ Ձձ՝

Կարողին Կոքսի նամակը 1-2  
 Ամփոփ լուրեր 3-4  
 Գրքերի ծանօթացում 4  
 Հայկական ցեղասպան. 5-7  
 Գրականութիւն՝  
 Իմ մանկութիւնը 8-10

Առաջին շապիկի վրայ՝  
 «Ունահարուած սրբութիւն»  
 (1895)  
 Վարդգէս Սուրենեան(1860-1921)

## فهرست بخش فارسی

نامه سرگشاده کارولین کوکس ۱-۲  
 مرور اخبار ۳-۴  
 معرفی کتاب ۴  
 قتل عام ارمنیان ۵-۷  
 ادبیات - کودکی من ۸-۱۰

طرح روی جلد:

تابلوی "قداست پایمال شده" (۱۸۹۵)  
 اثر وارنگس سورنیان (۱۸۶۰-۱۹۲۱)

## Չձ՝ ՌՅ՝ ԸՅ՝ ճճ՝ Ըճ՝ձ՝ Յ՝ձ՝ ԲԸ՝Յ՝ Ի՝ ԻՇՕԿ՝ճՁ՝

Թամար Փանոսեան, Աննա Սարգսեան, Ռուբիկ  
 Սարգսեան, Լևոն Ահարոնեան, Ռոբերտ  
 Վարդումեան, Վաչիկ Վարդանեան, Անդրանիկ  
 Խեչումեան, Կարո Սարգսեան, Ժորժ Ահարոնեան,  
 Րոյ Ղազարեան, Արմենուհի Սինանեան, Էդ. Գերմանիկ,  
 Առլետ Վարդումեան, Սուրէն Խեչումեան,  
 Մարտիկ Յ. Քարամ, Վերժիկ Կարապետեան,  
 Ազատ Օրդուխանեան, Ռազմիկ Վելիջանեան  
 Սուսաննա Համբարձումեան, Վլադիմիր Ալեքսանեան,  
 Վիոլետ Ջուակիմ, Գայեանէ Աբգարեան

# 24

Օսմանեան կայսրութիւն. ծանր ժառանգութիւն: Կարծիքներ, մեկնաբանութիւններ եւ դատողութիւններ ամբողջ աշխարհի յայտնի փորձագէտների կողմից-կազմող՝ Վահագն Տատրեան

The Ottoman Empire: A Troubled Legacy: Views, Comments and Indgments by Noted Experts Worldwide/Compiled by Vahakn N. Dadrian- The Zoryan Institute, Cambridge, MA and Toronto, 1997-125 p.

1868-1894 թթ.- Բրիտանիայի պրեմիեր մինիստր Գլեդսթոունը իր պամֆլետներից մեկում թուրքին համարում է «մարդկութեան ամենամեծ հակամարդկային տեսակը, որին պատկանում է մի ժառանգութիւն՝ ներկայ դարաշրջանի, եթէ ոչ մարդկային յիշողութեան, ամենաստոր եւ ամենասեւ վայրագութիւններով»:(էջ 3)  
«...Թուրքիայից վերցւած իւրաքանչիւր սանտիմետր հողը նւաճում է քաղաքակրթութեան համար»:(էջ 4)

ՄáõÃæ³ ¼¹ ñ¿ç

Աւստրիայի արտոգործնախարար  
1871-1879 թթ.

«Թուրքերը մնացել են ռազմական նւաճող կաստա, որոնք չեն տալիս հպատակներին քաղաքական իրաւունքներ, վատ են վերաբերում նրանց եւ ճնշում բոլոր հնարատր ձեւերով: Իրենց գերիշխանութիւնը նրանք ձեռք են բերում ոչ թաւական գերակշռութեամբ, ոչ էլ բարձր քաղաքակրթութեամբ, այլ միայն սրի ուժով: նրանք մնացել են դեռեւս որպէս մի թշնամական բանակ, որ ճամբար է դրել անգէն հպատակների հողում, որոնք նողկում են նրանցից: Իրենց ամենափառաշէտ օրերին իսկ՝ Մուհամեդ II-ի եւ Սուլէյման Հրաշալի ժամանակներում, թուրքերը չստեղծեցին ոչ մի վարչակազմ, չտուեցին մտածող կամ գրող, բանաստեղծ կամ նկարիչ:

Թուրքական կառավարութիւնը ոչ թէ կառավարութիւն է մեր հասկացած իմաստով, այլ կառավարման ժխտում: Դա անիշխանութիւն է՝ գումարած հարկահաւաքութիւն:Այն թոյլ է տալիս ամէն մէկին գէնքով գրաւել հարեւանի հողը կամ խլել նրա դատերը, եթէ կամենում է:

... Թուրքական կառավարութիւնը միշտ եղել է պարզապէս կազմակերպւած աւազակութիւն»:(էջ 8)

æ»Ūë ´ ñ³ Ūë

Բրիտ. ժառանգան  
1896 թ.

«Թուրքիայի բոլոր յեղափոխականներս գտնում ենք , որ հայերի կոտորածը այնպիսի ծանր իրողութիւն է , որը կվարկաբեկի թուրքիզմի եւ մասնատրապէս օսմանիզմի համբարը: Այդ իսկ պատճառով մենք չենք տատանում մեղադրել Աբդուլ Համիդին»:( էջ 30)

ø»Ū³ É Ö³ ß³

Երիտթուրքական կուսակցութեան անդամ  
1908-1918 թթ.

ԲԵՆՅԱՆՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

Պատգամատրական ժողովի ընտրություն.-Թեհրանի Հ.Թ. Ազգային Առաջնորդարանից տեղեկացանք, որ երկրի ներքին գործերի նախարարությունը իրաւունք է տւել նոր Ազգային Պատգամատրական Ժողովի ընտրութիւնների համար:

Մանրամասնութիւններին տեղեկանալու համար դիմեցինք Ազգ. Առաջնորդարանի հանրային կապի բաժնի պատասխանատուին: Նա տեղեկացրեց, որ շուտով կեանքի է կոչուելու ընտրական յանձնախումբ, որն էլ կարող է ընտրութիւնների վերաբերեալ տալ անհրաժեշտ տեղեկութիւններ:

Թ.Հ.Թ. Առաջնորդական տեղապահ Տ.Սեպուհ եպս. Մարգսեանը Թեհրան վերադարձաւ.- Գերաշնորհ Սրբազան Հայրը ապրիլի 4-6-ը մեկնել էր Կահիրէ՝ եկեղեցիների համաշխարհային խորհրդի ծրագրաւորման խորհրդատու յանձնախմբի համագումարին մասնակցելու: Վերադարձին Սրբազան Հօրը ուղեկցում էր Հոգեշնորհ Տ.Ներսէս արեղայ Մերճանեանը, ունենալով կրօնական յատուկ առաքելութիւն:

Թեմական խորհրդի գեկոյցը Հեշմաթի բաղամասում

Սոյն քաղաքի ապրիլի 11-ին Թեհրանի Հ.Թ. Թեմական Խորհրդի յանձնարարութեամբ պրն. Ռ. Կարապետեանը գեկոյցմամբ հանդէս եկաւ Հեշմաթի բաղամասի հայ բնակիչների առջեւ: Համառօտ ներկայացնում ենք այդ գեկոյցը:

Նա այս հանդիպման առիթի ստեղծման համար գոհումակութիւն յայտնեց, եւ ցաւ արտայայտեց, որ նախորդ երկու հանդիպումները տհաճ պայմաններում են տեղի ունեցել: Ըստ նրա, հանդիպումներից պարզել է, որ այս բաղամասի ժողովուրդը որոշ անուծելի խնդիրների առջեւ է կանգնել: Պրն. Կարապետեանը յոյս յայտնեց, որ միասնական ուժերով համապատասխան լուծում պէտք է որ տրի առաջացած խնդիրներին: Ու ասաց, որ Հայոց Առա-

քելական Եկեղեցին ժողովրդավարական եկեղեցիների թիւն է պատկանում: Եւ ինչպէս գիտենք, ժողովուրդն է ընտրում իր ազգային բարձրագոյն մարմինը, այսինքն՝ Պատգամատրական Ժողովը: Իսկ Պատգամատրական Ժողովը՝ իր հերթին, ընտրում է Թեմի Առաջնորդին եւ Թեմական Խորհուրդը: Թեմական



Խորհուրդն էլ իրականացնում է ազգային, հասարակական, կրօնական եւ կրթական բոլոր աշխատանքները: Ըստ ազգային կանոնադրութեան, ազգային իշխանութեան մէջ եւ բոլոր ազգային հաստատութիւններում աշխատող անձինք, որեւէ նիւթական վարձատրութիւն չեն ստանում, նրանք աշխատում են սիրողական: Թեմական Խորհուրդը ընտրում է երկու տարով: Այն բաղկացած է 11 հոգուց:Ներկայիս Թեմական Խորհուրդը ընտրւել է Պատգամատրական Ժողովի 79-րդ նիստում: Երկու ամսից մեր ներկայիս Թեմական Խորհրդի գործունէութեան շրջանը ւարտւում է եւ նորընտիր Պատգամատրական Ժողովը նոր Թեմական Խորհուրդ կընտրի: Մեր Թեմական Խորհուրդը, որ ընտրուեց, հէնց առաջին օրանից որոշում կայացրեց՝ բոլոր խաւերին ազգային աշխատանքների ոլորտը ներքաշելու մասին եւ այս առիթով երկու կոչ հրապարակեց, որոնց արձագանքեցին միայն 35 հոգի: Նրանք ներգրաւեցին մեր տարբեր մարմինների աշխատանքների մէջ: Թեմական Խորհուրդը ունի 25 յանձնախումբ, որոնք նշանակել է հէնց ինքը: Այդ յանձնախմբերից կան խորհուրդներից՝ Կրթական Խորհուրդը պաշտօնական մարմին է ճանաչուել պետութեան կողմից, որն զբաղւում է հայոց համայնքի հետ կապուած բոլոր կրթական հարցերով: Ինչպէս յայտնի է, 16 տարի ընդմիջումից յետոյ, մօտակալ ժամանակները կընտրի նոր Պատգամատրական Ժողով: Այսպէս պրն. Կարա-

պետեանը Թեմական Խորհրդի անունից դժգոհութիւն արտայայտեց մեր ժողովրդի նկատմամբ, որ նա, ինչպէս նախկինում էր օժանդակութիւն ցուցաբերում՝ թէ՛ մարդուծով եւ թէ՛ Ֆինանսապէս, այժմ դա չի իրականացնում: Նա ասաց, որ մեր ժողովուրդը անաարբեր է իր եկեղեցու հանդէպ: Եւ անելով շիւմարեց նշելու այն փաստը, որ Մեպուհ Սրբազանը Թեհրան ժամանելով՝ նկատեց մի աննորմալ քերութիւն, այն է՝ Կրօնական Խորհրդի բացակայութիւնը: Եւ դա բացատրեց հետեւեալ կերպով, որ աշխարհական մարդիկ չպէտք է խառնեն կրօնական հարցերին: Եւ հէնց այդ պատճառով է, որ Կրօնական Խորհուրդը կեանքի է կոչուել: Վերջում նա անդրադարձաւ Հեշմաթի բաղամասում ծագած խնդրին եւ ասաց, որ դա պէտք է լուծի Թեմական ու Կրօնական խորհուրդների միջոցով:

Հանդիպում Իրան-Փիրուզ նախակրթարանում.- Իրան-Փիրուզ նախակրթարանի հոգաբարձութիւնը՝ «Խորհուրդներ ծնողներին» քեմայով,



սոյն քաղաքի ապրիլի 10-ին հանդիպում էր կազմակերպել դոկտ. Արտաշէս Աւանեսեանի հետ:

Կլոր սեղան ՀՄՄ Միփան Միութիւնում.- Սոյն քաղաքի ապրիլի 2-ին ՀՄՄ Միփան Միութիւնում կազմակերպուեց կլոր սեղան: Զրուցեցին հետեւեալ քեմաներով՝ Պոլսահայութիւն, Կոմիտաս, Բժշկութիւն: Ներկայ էին իրանահայ բժիշկ, Գարաբաղի բաղամասի ստացած՝ դոկտ. Վահիկ Ռաբէտեանը եւ պոլսահայ, Երեսնում արդէն 10 տարի բնակուող, կոմիտասագէտ՝ դոկտ. Տիրան Լոքմազեօզեանը: Վերջինս զբաղւում է Կոմիտասի ձեռագրերի ուսումնասիրութեամբ: Նա մանրամասն ներկայացրեց իր ուսումնասիրութիւնները, խօսեց նաեւ

պոլսահայ գաղութի մասին: Իսկ դուկտ. Վ.Ռաֆեոսեանը ներկայացրեց Հայաստանի և Արցախի բժշկութիւնը:

### Յատուկ մրցանակի է արժանացել սիրողական աստղագիտութեամբ զբաղող իրանահայը

(Համշահրի օրաթերթ, 12.04.2000): Իրանահայ ջանատւեր երիտասարդ աստղագետ Օշին Դանիէլի Չաքարեանը «Աստրոնոմի» միջազգային ճանաչում ունեցող ամսագրին էր ուղարկել մի լուսանկար, որտեղ նկարած էր Եագրի Ամիր Չախմաղ



թերիէի բար-ձունքից՝ լուսնի ծագման փուլերից մի տեսարան, որով և շահեց սոյն հանդէսի յատուկ մրցանակը: Յիշեալ լուսանկարը տպագրուել է 2000 թա-կանի ապրիլեան համարում, ինչպէս նաեւ ինտերնետի հետեւեալ էջում՝ WWW.ASTRONOMY.COM:

Հարկ է նշել, որ «Աստրոնոմի» ամսագիրը աստղագիտութեան բնագաւառում աշխարհի հանրայայտ գիտական ամսագրերից կարեւորագոյնների շարքն է դասում, որը չափազանց բժախնդիր է իր նիւթերի և նկարների ընտրութեան ու տպագրման խնդրում:

«Լոյս» երկշաբաթաթերթը շնորհաւորում է պր. Օշին Դանիէլի Չաքարեանին և նորանոր ստեղծագործական յաջողութիւններ մաղթում:

Հայոց ցեղասպանութեանը նւիրւած միջոցառում Սարդարապատ Միութիւնում.- Սոյն թականի ապրիլի 17-ին Սարդարապատ Միութիւնում կայացաւ մի միջոցառում, որը նւիրւած էր Հայոց Տեղապանութեանը: Այն բացեց պրն. Արամ Նովշադեանը: Այնուհետեւ «Մայրիկ» գեղարուեստական Ֆիլմից ցուցադրեցին հատուածներ: Վերջում Հայոց Եղեռնի և հայ ժողովրդի արդար պահանջների վերաբերեալ ելույթ ունեցաւ պարոն Մերժիկ Ստեփանեանը:

Թարիգի Հայոց Առաջնորդարանի շէնքը անցաւ Իրանի ազգային յուշահամալիրների շարքը.- (Մոշարեթթ օրաթերթ, 05.04.2000): Դաջարիէի շրջանում կառուցւած Թարիգի Հայոց Առաջնորդարանի շէնքը պետութեան կողմից ճանաչեց որպէս ազգային կառոյց:


ԻԱՄՄ-ի սկսուտական բաժնի բանակում:2000 թ. մարտի 23-ին տեղի ունեցաւ նշւած բաժնի 4 օրեայ ընդհանուր բանակում՝ Թեհրանի Մեհրաբադ շրջանում: Բանակումը հետապնդում էր հետեւեալ նպատակը, այն էր՝ տարաբնոյթ դժարութիւնների յաղթահարումը:

Թղթակից՝



Մարտիկ Յարութիւն Քարան

Տօնավաճառ ԻԱՄՄ-ում.- Սոյն թականի ապրիլի 7-ին, Չատիկի առիթով, Իրանահայ Ազգային և Մշակութային Միութեան կանանց բաժնի կողմից, կազմակերպեց տօնավաճառ:



### Սարգական կեանքը Թունեան Օրիորդաց Դպրոցում

Սոյն թականի ապրիլի 16-ին Թունեան օրիորդաց դպրոցի ուղեցոյց բաժնի աշակերտուհիները պարզեատրուեցին շքանշաններով՝ բասկետբոլ մարզածուից համադարցական խաղերում առաջին տեղը զբաղեցնելու համար: Իսկ շախմատի համադարցական մրցոյթում նրանք գրաւեցին երկրորդ, երրորդ և չորրորդ մարզանքի դասատու տիկ.



Էլմա Ֆալահեան

բոլոր տեղերը: Բասկետբոլի հաւաքականում մասնակցում էին հետեւեալ աշակերտուհիները՝ Արմինէ Դազարեանը, Լիլիան Յակոբեանը, Լեռնիկ Մովսիսեանը, Ռամելա Մահ-



մուղեանը, Արմինէ Խոսրովեանը, Մելին Իսկանդարեանը, Մեղեղի Նազարեանը, Անաշէ Ըահբանդարին, Մարիմէ Ըահբանդարին, Ալմարա Բեգիջանեանը, Մեղմիկ Թահմագեանը, Սաթօ Սիրբեգեանը և Այլին Արթունեանը: Իսկ թեթեատլետիկայի հաւաքական են ընդգրկուել՝ Անաշէ Բիգարեանը և Անգինէ Մահմուղեանը:

Համադարցական խաղերի Ֆիզիկական պատրաստածութեան ցուցադրման բաժնում, դպրոցի աշակերտուհիներից մասնակցեց Միւնէ Բարախանլուն:

Էձօ՞ն Կ

Մշակոյթի նախարար դուր. Մոհաջերանին ասել է. «Պատմութեան մէջ մուսուլմանների եւ քրիստոնեաների միջեւ գոյութիւն է ունեցել համագործակցութեան ոգի»:

Իրանի առաջին արեւային բաղնիքը շահագործեց.- (Համշահրի օրաթերթ, 09.10.99): Իրանի Ֆերդոս շրջանի Բեշրուիէ քաղաքի շրջակայքում գտնուող Ֆաթի-Աբադ գիւղում շահագործման յանձնեց առաջին արեւային բաղնիքը: Այն կառուցելու եւ շահագործման յանձնելու համար պահանջւել է 140 միլիոն ռիալ (15.000 դոլար), որի հաշիւն տարեկան շուրջ 7200 դոլարի կամ 36000 լիտր նաւթի խնայողութիւն է լինելու:

ՏեսաՖիլմերը այլեւս չեն արգելու.- (Մոքիէ էմրուգ օրաթերթ, 02.04.2000): Երկրի Գերագոյն դատարանը որոշում է կայացրել, ըստ որի թոյլատրելի է դառնում բնակարաններում լուսանկարներ եւ տեսաՖիլմեր ունենալու հանգամանքը: Մակայն արգելու է դրանց առք ու վաճառքը:

Աշխարհում եղած գորգերի 31 տոկոսը Իրանն է արտադրում.- (Մոքիէ էմրուգ օրաթերթ, 04.04.2000): Իրանի գիւղերի ձեռագործ գորգերն արհմիութիւնների կենտրոնական վարչութեան ղեկավար պրն. Նոսրաթօլլահ Մահմուդզադէն յայտնեց վերոյիշեալ լուրը: Այս արհմիութիւնը իր մէջ ընդգրկում է 286 մասնաճիւղ եւ 560.000 գորգագործ, որոնք գտնուում են երկրի 22 նահանգներում:

Հայաստանի Հանրապետութիւնում Իրանի Իսլամական Հանրապետութեան ղեկավար նշանակեց պրն. Մոհամադ Ֆարիադ Բոլէյնին: Մոյն քաղաքի ապրիլի 9-ին ԻԻՀ նախագահ՝ Մ.Խաթամին



հանդիպում ունեցաւ երեք երկրներում՝ իր կողմից նշանակած ղեկավարների հետ:

Դպրոցներում ստեղծելու են աշակերտական խորհուրդներ.- (Մոքիէ էմրուգ օրաթերթ, 29.03.2000): Յաջորդ ուսումնական տարի փորձնական ձեւով սկսելու են կազմելու ու աշխատել աշակերտական խորհուրդներ՝ տարրական եւ ուղեցոյց դպրոցներում: Այս խորհուրդները արդէն կազմել եւ իրենց արդարացրել են միջնակարգ դպրոցներում:

Իրանի շրջաններից մէկում յայտնաբերւել է քաղցր գազի պաշար.- (Մոշարեթաթ օրաթերթ, 06.04.2000): Այդ մասին յայտնել է Իրանի նաւթային նախարարը: Նա նշել է, որ այդ շրջանում կայ 445 միլիարդ մետր խորանարդ գազ եւ դա ունի 16.5 միլիարդ դոլարի արժողութիւն:

Յաջորդ տարի Իրանի քաղաքները կառուցանա՞ն հասնելով 1032-ի.- (Մոքիէ էմրուգ օրաթերթ, 30.03.2000): Երկրի քաղաքաշինութեան եւ ճարտարապետութեան կենտրոնի տեսլների համաձայն, 1380 քաղաքներ Իրանի քաղաքները կառուցանա՞ն հասնելով 1032-ի:

ԾՅ ԽՅ ԷԻ Յ Կ

Շայաստանում սկսել են շահագործել մի շարք գործարաններ (Ազգային հեռուստատեսութիւն, 04.04.2000թ.)

Ազարակի գործարանը.- Այս գործարանը պայմանագիր է կնքել մոլիբդէնային գործարանի հետ: Ըստ այդ պայմանագրի, Ազարակի գործարանը մոլիբդէնի խտանիքով կմատակարարի մոլիբդէնային գործարանին: Այս համագործակցութիւնը փոխշահաւետ է երկու գործարանների համար:

Բաջարանի պղնձամոլիբդէնային գործարանը.- Այս գործարանը ունի 2210 բանուր, անցեալ տարի տեւել է 8 միլիարդ 600 միլիոն դրամի

արտադրանք: Այն շահագործում է 90 տոկոսով:

Ղափանի լեռնամետալուրգիական գործարան.- Գործարանը սեփական միջոցներով է սկսել իր նոր հանքավայրերի շահագործումը, որը բազմամետաղային է: Այն հնարարութիւն կտայ համաշխարհային շուկայ արտահանել այստեղ արտադրուող պղինձը, ոսկին եւ ցինկը: Մրանց գները բաակահին բարձր են եւ, դեռ գնալով, աճում են:

Չարեցաւանի «Չորակենտրոն» գործարան.- Այս գործարանը ունի 300 բանուր՝ 26000 դրամ միջին աշխատավարձով: Այն ունի հետագայ լուրջ ծրագրեր, որոնք, ըստ վարչապետի, իրատեսական են:

Հաստոցաշինական գործարան.- Այս գործարանի 20 տոկոսը պատկանում է գործարանի կո-



լեկտիին, իսկ 40 տոկոսը՝ պաշտպանութեան եւ արդիւնաբերութեան նախարարութիւններին: 1990 քաղաքում գործարանը 400 միլիոն դրամի արտադրանք է տուել: Այս տարի գործարանը ստացել է 520 միլիոն դրամի պատուէր: Այստեղ 630 բանուր է աշխատում՝ 40.000 դրամ միջին աշխատավարձով:

Հայ ատոռնկերութիւն.- Այստեղ 1999 քաղաքում արտադրել է 520 միլիոն դրամի արտադրանք, այս տարի այս թիւը կհասնի 700 միլիոնի: Գործարանը հիմնականում ներքին շուկայի պատուէրներ է կատարում: Պարտքեր չունի: ունի 280 բանուր՝ 42.000 դրամ միջին աշխատավարձով: Այն կառավարութիւնից աջակցութիւն է ստանում՝ բիզնես պլաններից մինչեւ շուկաների հայթայթում: Վարչապետ Արամ Մարգարեանը այցելել է բոլոր վերոյիշեալ գոր-

ծարանները: Նա նշել է, որ այս բոլոր գործարաններն էլ ապագայ ունեն, եւ նրանք ներկայ տեսնողով հայտնի դեռ կարող են աշխատել աւելի քան 50 տարի:

**Ա**րտագաղթը եւ ազգային անվտանգութիւնը.- (Ազգ.հեռ., 06.04.2000): Ազգային Գիտութիւնների Ակադեմիայում ապրիլի 5-ին «Օրինաց երկիր» կուսակցութեան նախաձեռնութեամբ տեղի ունեցաւ «Արտագաղթ եւ ազգային անվտանգութիւն» թեմայով հասարակական սեմինար:

**Ս**փիւռքի հայ ուսուցիչները վերապատրաստման դասընթացների կմասնակցեն Հայաստանում.- (Ազգ.հեռ., 06.04.2000): Ըստ կրթութեան եւ գիտութեան նախարարութեան սփիւռքի բաժնի պետ Իւրի Նաւոյեանի, սփիւռքում հայերէնի դասաւանդման ապահովումը եւ հայագիտական առարկաների ուսուցման մեթոդի կատարելագործումը օրակարգի հարց է դարձել: Ծրագիրը կիրականացի երեք մակարդակով՝ նախակրթարանների, դաստիարակների, միջին եւ աւագ դպրոցի ուսուցիչների համար: Դասընթացները միանսեայ կլինեն, որոնք կվարեն Հայաստանից եւ սփիւռքից հրաւիրած ճանաչած մասնագէտ դասախօսները: Այս ծրագիրը իրականացելու է Հայաստանում եղած դեսպանատների միջոցով:

**Հ**այաստանի համահայկական հիմնադրամի բոլոր նախատեսւած ծրագրերը իրականացել են.- (Ազգ.հեռ., 17.04.2000): Ապրիլի 17-ին Երեւանում տեղի ունեցաւ հոգաբարձու խորհրդի անդամների նիստը: Այստեղ վերանայեցին կատարուած աշխատանքների արդիւնքները եւ քննարկեցին 2000 թականի հետագայ ծրագրերը: ՀՀ նախագահ Ռ.Քոչարեանը անդրադառնալով այս նախաձեռնութեանը նշեց, որ հիմնադրամը մեծ նշանակութիւն ունի հայութեան համար, քանի որ համահայկական կարեւոր կառույցներից մէկն է հանդիսանում, որը մեծ աշխատանքներ է տարել՝ իրականացնելով բոլոր նախատեսուած ծրագրերը: Հոգաբարձուների խորհրդի

անդամ, Ֆրանսիայից ժամանած պրն. Թերզէյեանը հարցազրոյցներից մէկի ժամանակ, ուրախութեամբ նշեց այն փաստը, որ Հայաստան-Սփիւռք համահայկական օղակներից մէկը՝ Հիմնադրամը բացարձակ վստահութիւն ներշնչող ազդակ է.- «Ես մեծ գոհունակութեամբ ցանկանում եմ նշել, որ հաւաքուած գումարները կծառայեն իրենց նպատակին: Անցեալ տարի հաւաքուած գումարի ընդհանուր թիւը կազմել է 3.449.484 ԱՄՆ դոլար, որից 3.286.266-ը ծառայել է նախատեսուած ծրագրի նպատակներին, իսկ 186.217 դոլարը մուտք է գործել հիմնադրամ: 1999 թականի նոյեմբերին տեղի ունեցած մարաթոնի ժամանակ հաւաքուած գումարները այս քերի մէջ չեն մտել, նրանք փոխանցել են եւ նախատեսել 2000 թականի ծրագրի համար:

**ՅՇՇ<sup>3</sup> 1/2. <sup>3</sup> ԿՅ**

**Վ**րաստանում քաղաքական ճգնաժամը դեռեւս շարունակուում է.- (Սոբիտ էւրոպ օրաթերթ, 14.04.2000): Է.Շիւրանադզէն յենելով ազգային ուժերի վրայ, ընտրեց երկրի նախագահ: Սակայն Վրաստանի արեւմտամէտ քաղաքականութիւնը՝ ՆԱՏՕ-ի ներքաշումը Կովկաս, Ռուսաստանի կողմից անհանդուրժելի է համարում: Հէնց դա պատճառ է հանդիսանում, որպէսզի Աբխազիայի եւ Հիւսիսային Օսեթիայի հետ եղած յարաբերութիւնները աւելի սուր բնոյթ ստանան: Չմայած Արեւմտեան մեծ տերութիւնների հովանաւորութեանը, Վրաստանը շարունակուում է մնալ քաղաքական ճգնաժամի պայմաններում: Եւ այդ պատճառով դժգոհութիւն է տիրում ժողովրդական լայն զանգածներում:

**Հ**էյդար Ալիեւը «Բրիտիշ Փեթրոլիում»-ի միջոցով է իշխանութեան հասել.- (Ֆաթի օրաթերթ, 28.03.2000): Ըստ Լոնդոնի «Մանդի քայմզ» օրաթերթի, 1993 թականին Հէյդար Ալիեւը իշխանութեան եկաւ «Բրիտիշ Փեթրոլիում» նախաին ընկերութիւնների միջոցով: Նրանք սա իրականացրեցին, որպէսզի ձեռնահասու լինեն Ադրբեյջանի նախա-

յին ռեսուրսներին: Այդ ընկերութիւնները եւ ամերիկեան «Ամակօ» ընկերութիւնը «Նաւթ զէնքի դիմաց» ծրագրով համաձայնութեան էին եկել Հէյդար Ալիեւի հետ: Այդ զէնքն ու զինամթերքը մատակարարել է Ադրբեյջանին Ղարաբաղեան պատերազմում:

**Փարիզի համամիասնական հանրահաւաքին մասնակցեց շուրջ 15.000 մարդ**

*Ա.Թորոյեան արեւելահայերէնի վերածեց եւ համարեց Աճնա Սարգսեանը*

Յեղասպանութեան ճանաչման թեման օրակարգ դարձնելու՝ Ծերակոյտի նախագահների ժողովի վերջին ներծանը, որպէս հակադեցութիւն, Ապրիլի 24-ի Կոմիտէի եւ Հայ Դատի յանձնախմբի կողմից կազմակերպուած միասնական հանրահաւաքը տեղի ունեցաւ մարտի 11-ի երեկոյեան՝ Ծերակոյտի շէնքի դիմաց: Հէնց սկզբից դժար չէր նկատել, որ ժողովրդի յիշողութեան, արժանապատուութեան դէմ եղած կրկնակի մերժումը արդէն լցրել էր համբերութեան եւ յանդուրժողականութեան բաժակը: Յայտարարուած ժամից առաջ, արդէն, ողջ Թունան փողոցը լեկ լեցում էր խիտ բազմութեամբ, որի թիւը հասնում էր շուրջ 15.000-ի: «Համամիասնական» որակած հանրահաւաքը ոչ միայն ցոյց էր տալիս նախաձեռնողների միասնականութիւնը, այլեւ՝ մասնակիցների: Մարդիկ այստեղ էին եկել Մարտիից, Վարանսից, Նիսից, Տեսիցից, Նորմանտից եւ այլ շրջաններից, եկել էին նաեւ դրացի երկրներից: Բազմութեան մէջ կային կոտորածից մազապործ եղած՝ տարեց կանայք, որոնք աւելի քան երեք ժամ, առանց յոգնածութեան որեւէ նշոյլ ցուցաբերելու, լուումզներ էին արտասանում, երգում, ծափահարում եւ բռունցք բարձրացնում: Պարզուած բոլոր պատասանները Թուրքիային եւ Ֆրանսիային տուեալական ակնկալիքների մէջ դատապարտող բնոյթ էին կրում: Իհարկէ, առաջին շարքերում կային մարդիկ,

որոնք պետական այրեր էին՝ քաղաքայետեր, Ծերակոյտում եղած անդամներ, պատգամատրոներ, խորհրդակականներ, նրանցից մեկ մասը, նոյնիսկ, ելոյթ ունեցան, զօրակցութիւն յայտնեցին եւ դատապարտեցին Ծերակոյտի կողմից վարած քաղաքականութիւնը: Այստեղ էին հաւաքել նաեւ այլ ազգային փոքրամասնութիւններ՝ յոյներ, ասորիներ, քրդեր եւ այլն: Ներկայ էին նաեւ «Մարդու Իրաւունքների Միութեան» անդամներ, հեռուստատեսութեան եւ մամուլի ներկայացուցիչներ:

«Դիւ Եամանին» յաջորդած՝ Ազնաւորի «Ils sont tombes»-ից («Նրանք ընկան») յետոյ ողջոյնի խօսքով հանրահաւաքը բացեց օրայ խօսնակ Մուրադ Փափազեանը, ապա խօսքը տեց Ապրիլի 24-ի Կոմիտէի նախագահ Ալէքսի Կեւլճեանին: Վերջինս համառօտ կերպով ներկայացրեց բազմութեանը արդէն ծանօթ պատճառները եւ ողջունեց հանրահաւաքում պաշտօնեայ անձանց ներկայութիւնը, ապա վճռականութիւն յայտնեց պայքարը շարունակելու՝ այնքան ժամանակ, մինչեւ որ Ծերակոյտի կողմից դրական լուծում տրի հարցին, եւ Ֆրանսիան պաշտօնապէս ճանաչի Հայերի ցեղասպանութիւնը:

Յաջորդաբար ելոյթ ունեցան նաեւ Հայ Դատի յանձնախմբի ատենապետը, Ապրիլ 24-ի կոմիտէի անդամներ, ազգային փոքրամասնութիւնների ներկայացուցիչներ, ծերակուտականներ եւ այլ քաղաքական գործիչներ:

Ելոյթները հիմնականում ծանրացան Ծերակոյտի մերժման դատապարտման վրայ, թէ այդ մերժումը, Ֆրանսիայի նման մարդկային իրաւունքները պաշտպանող երկրի վրայ, ինչ անդրադարձ կարող է ունենայ: Թէ ինչպէս են պախարակում մի ժողովրդի ազգային շահերը, ամետրական շահերին զոհաբերելով: Եւ նաեւ Եւրոխորհրդին Թուրքիայի անդամակցութեան հարցի վրայ: Այս առիթով Ժ.Միլլէրը իր խօսքում ասաց հետեւեալը. «Չի կարելի սպրել Ֆրանսիայում եւ պնդել, թէ 1915 թականին կատարւածը ցեղասպանութիւն չէր: Այդ ժխտողականութիւնը, որը հայերին է իրախ դարձնում, վտանգում է նաեւ

Ֆրանսիան: Երբեք չպետք է մոռանանք, որ այսքան տասնամեակ ապրելուց յետոյ ուրանալու կարիք ունեցողներ կան, ինչպէս օրինակ՝ Թուրքիան»: Փ. Տէվէճեանը, որի ներկայութիւնը մեծ խանդավառութիւն առաջ բերեց, ասաց թէ այսքան մեծ քանակութեամբ հայերի ներկայութիւնը Ֆրանսիայում լաւագոյն ապացոյցն է կատարածի, որի համար որեւէ յաւելելի փաստի կարիք չի զգացում: Ապա անդրադարձաւ Եւրոպական միութեանը (Եւրոխորհրդին) Թուրքիայի անդամակցութեան խնդրին: Իրենից յետոյ բեմ բարձրացածներից ծերակուտական Մ. Դէպարժը մտքեց, որ այս կազմակերպւած հանրահաւաքը՝ այդ ուղղութեամբ վերջինը լինի: Իսկ Վալ Դ՝ ուազի ծերակուտական տիկին Մ.Գ. Պօտուն յայտարարեց. «Ձեր դատը նաեւ ի՞նչ է»:

Ելոյթ ունեցողներից շատերը գոհունակութեամբ անդրադարձան տպաւորիչ բազմութեանը, որը հաւատացնում էր, թէ թելադրական հզօրութիւն պետք է ունենար: Մնում է սպասել մինչեւ մարտի 21-ը, երբ 30 ծերակուտականներ նոր փորձեր կանեն օրակարգ դարձնելու՝ ցեղասպանութեան ճանաչման թեման:

Ամէն ելոյթից յետոյ լռուցման էին արտասանում, ինչպէս օրինակ՝ «Թուրքիան կոտորում է, Ծերակոյտը թաղում է», «Անկարա՛, պետք է յաղթենք քեզ», «Շիրակ, մի՛ մոռանայ, որ պատմութիւնը պետք է դատի քեզ» եւ այլն:

Պէտք է նշել, որ կազմակերպչական լուրջ աշխատանք էր տարւել, ինչը եւ նպաստեց յաջողութեանը:

Հեռուստատեսութեան կայանները երեկոյեան լուրերի հաղորդման մէջ անդրադարձան Ծերակոյտի մերժմանը եւ կայացած հանրահաւաքին:

تعمیر گاه الکترو گارانتی  
تعمیر و سیم پیچی ژنراتور و  
الکتروموتور و تابلوهای فرمان  
الکتریکی تلفن : ۶۲۲۴۴۶۶

Մարտի 11-ի հանրահաւաքը թէ՛ կազմակերպչական եւ թէ՛ մասնակցութեան առումով միասնակցութիւնը լայնօրէն արդարացնող ձեռնարկ էր: Վերջապէս դուրս ենք գալիս «Մենք ասում ենք, մենք լսում»-ի կարգավիճակից: Ամբողջ հարցը նրանում է, որ այս յաջողութիւնը նպատակների իրականացում չհամարի, այլ ազդեցիկ ընթացքի ելման կէտ:

«Տասնօր» օրաթերթ, Փարիզ, 14.03.2000

Արտասահմանցի կամանց եւ երեխաների ստրկութիւնը ԱՄՆում.- (Մոշարեքաթ օրաթերթ, 03.04.2000): Տարեկան 50.000 երեխայ եւ կին խաբէութեամբ բերում են Ամէրիկա, որոնք յետոյ ստիպւած են լինում զբաղել անբարոյականութեամբ, ստրկութեամբ եւ ուրիշ այլ անվայել եւ ծանր աշխատանքներով: Պետութիւնը ամէն կերպ ջանում է քողարկել նման հարցերը եւ բոլոր միջոցներով խոչընդոտում է դրանց քննարկումը եւ բացայայտումը:

Երկրի արտաքին պարտքերը կանգնեցնում են այն ծանր դժարութիւնների առջեւ.- (Մոշարեքաթ օրաթերթ, 05.04.2000): CNN լրատական ցանցը ապրիլի 4-ին տեղեկացրել է, որ ներկայումս ԱՖրիկեան երկրները ունեն շուրջ 350 միլիարդ դոլարի արտաքին պարտքեր: Այս խնդիրը ծառայել է նշւած պետութիւնների տնտեսութեան առջեւ:

سولهاسی سولاس  
تالار پذیرایی سفید  
آماده پذیرایی از جشنها و  
مجالس در تالار و منزل با  
کیفیت عالی  
جاده دماوند خیابان  
وحیدیه پلاک ۵۶  
تلفن ۷۸۱۶۴۹۱

# Գերմանահայոց Կենտրոնական Խորհրդի 30- ամեայ տարեկիցը

Ազատ Օրդուխանեան  
Բոխուն, Գերմանիա

1999 թ. նոյեմբերի 20-ին Գերմանիայի Ֆրանկֆուրտ- Մայն քաղաքում տեղի ունեցաւ Գերմանահայոց Կենտրոնական Խորհրդի (ԳԿԽ) հիմնադրման 30-ամեակին նվիրած տօնակատարութիւնը եւ կազմակերպութեան հերթական տարեկան ընդհանուր ժողովը: ԳԿԽ-ն, որը կեանքի է կոչուել 1969 թ. Գերմանիայի Ախէն քաղաքում եւ սկզբնական շրջանում հանդէս է եկել որպէս Եւրոպայի գերմանախօս երկրների հայ գաղութների կենտրոնական կազմակերպութիւն, այժմ համարում է Գերմանահայ բազմաթիւ անհատ հայերի կենտրոնական հասարակական- քաղաքական եւ մշակութային մարմինը: Այն իր գործունէութեան բազմաբովանդակ շրջանակներում ընդգրկել է նաեւ աշխատանքներ, որոնք տարւում են Հայաստանի պետական ու հասարակական-մշակութային կազմակերպութիւնների ու եւրոպական որոշ կառոյցների հետ:

ԳԿԽ-ի 1999 թ. նոյեմբերի 20-ի առաօտեան նիստին հրաւիրւած էր եւ ելոյթ ունեցաւ Եւրոպահայ Միութիւնների Ֆորումի (ԵՄՖ) ընդհանուր քարտուղար պր. Թորոս Մաղըրեանը: Նա ներկայներին պատմեց ԵՄՖ-ի Օւեցարիայում գործող կենտրոնի կողմից արդէն իրականացող որոշ ծրագրերի մասին, շեշտեց յատկապէս Եւրոպայի տարբեր երկրների հայկական կենտրոնական կազմակերպութիւնների համատեղակայան հայկական ծրագրերին ակտիւօրէն մասնակցելու խնդրի կարեւորութիւնը:

Այնուհետեւ ամբիոնը տրամադրեց ԳԿԽ-ի հրաւերով Ստամբուլի գազաթնաժողովից միանգամից Գերմանիա եկած Հայաստանի Հանրապետութեան արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեանին: Նախարարը, որին ուղեկցում էին եւս երկու քաղաքական գործիչներ, Հայաստանից ու Գերմանիայում ՀՊ. լիազօր դեսպան պր. Աշոտ Ռսկանեանը, պատմեց Ստամբուլում հաջ. պատկերակութեան ունեցած զանազան հանդիպումների մասին, շեշտեց. դնելով յատկապէս գազաթնաժողովում, արեւմտեան տէրու. քիւնների կողմից արցախեան հարցում ցուցաբերած որոշ նկատելի առաջընթացի վրայ: Նա Ստամբուլի հանդիպման որոշումները համեմա-

Ասուլիսից յետոյ, արեւելագետ Անդրեաս Շմիդտի (Գորքմունդ քաղաքից) միջնորդութեամբ, տեղի ունեցաւ Վարդան Օսկանեանի եւ Աշոտ Ռսկանեանի հանդիպումը Գերմանիայում գործող ասորական չորս քաղաքական կուսակցութիւնների՝

Ասորական դեմոկրատական կազմակերպութեան  
 Ասորական դեմոկրատական կուսակցութեան  
 Ասորական հայրենասիրական կուսակցութեան  
 Ասորական ազատագրական կուսակցութեան  
 ինչպէս նաեւ Գերմանիայի Ասորական Մշակութային Կազմակերպութիւնների Կենտրոնական Միութեան ներկայացուցիչների հետ: Երեկոյեան, Գերմանիայի Կենտրոնական Խորհրդի 30-ամեակի առթիւ, շնորհատրական հեռագիր ստացւեց նաեւ ԱՄՆ-ից, որով Ասորական Ունիվերսալ Ալիանսի (Assyrian Universal Alliance) նախագահ, ամերիկեան սենատոր Ջոն Նիմրոդը (John Nimrod) շնորհատրում էր կազմակերպութեանը:

Ընդհանրապէս պետք է ասել, որ վերջին տարիներին ԳԿԽ-ն ակտիւօրէն համագործակցում է ասորական մի շարք կազմակերպութիւնների հետ եւ նրանք յաճախ են ներկայացուցիչներ ուղարկում յատկապէս ԳԿԽ-ի կազմակերպած Ապրիլի 24-ի ծրագրերին:

Նախարարական խմբի հանդիպումներից յետոյ, ԳԿԽ-ն անցաւ իր անդամական ընդհանուր ժողովի աշխատանքներին: Ժողովը որոշեց՝ Կազմակերպութեան 30-ամեակի առթիւ, ԳԿԽ-ի պատուաւոր անդամի կոչում շնորհել հայ եւ գերմանացի մի քանի մտատրականներին, որոնք ոչ միայն տարբեր տարիներին համագործակցել են կազմակերպութեան հետ, այլեւ իրենց բնագաւառներում եւ ընդհանրապէս օգտակար են եղել հայ ժողովրդին: ԳԿԽ-ի պատուաւոր անդամի կոչումներ ստացան հայերից՝



տելով Լիսաբոնեան որոշումների հետ, այն համարեց մի քայլ առաջ կատարած առաջընթաց՝ ի նպաստ հայերի: Ապա նախարարը, ինչպէս որ սպասում էր, անդրադարձաւ Հայաստանի այս տարւայ հոկտեմբերի 27-ի դէպքերին եւ այն բնութագրեց որպէս զուտ Հայաստանի շրջանակներում կատարած դէպք, բացառելով այդ հարցում որեւէ օտար երկրի միջամտութեան հնարաւոր հանգամանքի ակայութիւնը: Նախարարի ելոյթի միւս կարեւոր մասը վերաբերում էր 1999 թ. սեպտեմբերին Հայաստանում անցկացւած «Հայրենիք- Սփիւռք» համաժողովի հարցերին, որը նրա կարծիքով լաւ շարունակութիւն է դառնալու եւ բաւականին կարեւոր արդիւնքներ է ունենալու: Այնուհետեւ եղաւ բաւականին երկար ասուլիս, որին ակտիւօրէն մասնակցեց նաեւ դեսպան դոկտ. Աշոտ Ռսկանեանը:



1. Երանուհի Հարթմանը, կազմակերպության երկարատև ակտիվ անդամ, (Բեռլին)

2. Յոլակ Տեր Յարութիանանը, Բոխումում գործող «Միխայիլ և Գեորգիանուսի» ինստիտուտի» տնօրեն, (Գիսերլորֆ)

3. Վերա Մովսիսեանը, փաստաբան, կազմակերպության երկարատև և ակտիվ անդամ, Երևանի «Մովսիսեան» տպարանի տնօրեն (Բեռլին)

4. Արթին Կլիդեանը, գերմանահայ գաղութի և ԳԿԽ-ի հնագոյն ակտիվ գործիչ, (Քոլն)

5. Էդուարդ Դալիթեան, կազմակերպության երկարատև ակտիվ անդամ

իսկ գերմանացիներից՝

6. Ռալֆ Ջորդանոն, ճանաչված գրող և հրապարակախոս, գերմանական հեռուստատեսության յայտնի աշխատակից, (Քոլն)

7. Դոկտ. Թեա Հոֆմանը, պատմաբան- հրապարակախոս, հայերի մասին գրած բազմաթիվ գրքերի հեղինակ, (Բեռլին)

8. Վոլֆգանգ Գուստը, «Spiegel» հանդեսի փորձառու ժողովրդագրագետ, Հայոց ցեղասպանության մասին

գրքի հեղինակ, (Համբուրգ)

9. Պրոֆ. դոկտ. Ossn Լուխտերհանը, իրաւաբան, Արցախի մասին արժէքատր ուսումնասիրության հեղինակ, խորհրդատու Հայաստանի Հանրապետության նոր սահմանադրության մշակման հարցերում, (Համբուրգ)

10. Վերներ Մէյերը, գրող, նախկինում «Munchener Abendzeitung» պարբերականի խմբագրության ղեկավար գործիչներից մէկը, հայաստան գաղութի յօդածների հեղինակ, (Մյունխեն)

11. Կլաուս Հիլեհե, Բաւարիայի Կարմիր Խաչի արտասահմանեան բաժնի ղեկավար, 1988 թ. հայաստանեան երկրաշարժից յետոյ գերմանական մարդասիրական օգնության ակտիվ կազմակերպիչներից մէկը

12. Մադելայն Բայերը, «Tubinger Armenien- Initiative» e.V. կազմակերպության ղեկավար, բազմաթիվ հայաստան ծրագրերի կազմակերպիչ, (Թիւրինգէն)

Այնուհետև քննարկեցին ԳԿԽ-ի տարբեր աշխատանքային կառոյցների ղեկավարների զեկոյցները, և ընդունեցին համապատասխան որոշումներ:

Ժողովը անցկացրեց նաև վարչության նոր ընտրութիւններ: ԳԿԽ-ի նախագահ ընտրեց կազմակերպության ամենահին ղեկավար անդամներից դոկտ. Շարաշ Յովասափեանը, իսկ փոխնախագահ, նոյնպէս գաղութի փորձառու գործիչ՝ դոկտ. ԲաՅՅի Պետիկեանը: Խորհրդի վարչության անդամներ ընտրեցին նաև Միլի Բալեանը, Ֆրէդ Խորանեանը և Ազատ Օրդուխանեանը:

Երեկոյեան Ֆրանկֆուրտ-Մայնի յայտնի «Haus Bornheim»

սրահում տեղի ունեցաւ ԳԿԽ-ի 30-ամեակին նիւած յորելեանական տօնակատարութիւն, որտեղ գլխատր դեր կատարեց Հայաստանից հրաւիրած յայտնի երգչուհի Նունէ Եսայեանը: Համերգին իր մասնակցութիւնը բերեց նաև Մանհայմի «Շանթ» երաժշտական խումբը: Երեկոյի հովանաւորներն էին Հայկական Աւիատիները և «Ազատ մենջմենտ» ընկերութիւնը: Համերգից զոյացած ամբողջ հասոյթը (30.000 գերմանական մարկ) տրամադրեց Բեռլինում ՀՀ դեսպանատան շէնքի գնման նպատակին: Ընդհանրապէս ԳԿԽ-ն իր համախոհների հետ միասին դեսպանատան շէնքի գնման համար արդէն փոխանցել է աւելի քան 50.000 գերմանական մարկ: Յաջորդ օրը՝ նոյեմբերի 21-ին, ԳԿԽ-ն շարունակեց իր ընդհանուր ժողովը և նախագծեց իր հետագայ աշխատանքների ընդհանուր ուղղութիւնները: Որոշեց, որ ԳԿԽ-ի կառոյցները աշխատեն հետեւեալ ուղղութիւններով

1. «Ապրի Արցախ» յանձնախումբ


2. Ցեղասպանության ճանաչման ուղղութեամբ: Այս յանձնախումբի աշխատանքներին օգնելու համար դահլիճում անմիջապէս հաւաքեց 2110 գերմանական մարկ

3. Կրթա-դաստիարակչական աշխատանքների ուղղութիւն

4. Տեղեկատւութեան- հաղորդակցութեան համակարգի ստեղծում

5. Գաղութային – կազմակերպչական աշխատանքի ուղղութիւն և այլն:

Նոյեմբերի 21-ի երեկոյեան ԳԿԽ-ի ընդհանուր ժողովը փակեց իր նիստերը:



## ԳՐԻԳՈՐԻՍ ԲՈՒԺԱՐԱՆ

Ներքին հիւանդութիւններ, մանկական, աբամնաբուժական, վիրաբուժական, հոգեբանական խորհրդակցութիւն, երեխաների պարուսպումներ, մանկաբարձութիւն, (կանանց հիւանդութիւններ), սրկումներ և վիրակապութիւններ

ԱՄԵՆ ՕՐ ԺԱՄԸ 8 – 23

نارمك : انتهاي شرمرد جنوبي مسيل باختز پلاك ۳۱۸ تلفن ۷۸۳۴۱۷۰

# Ինչո՞ւ Տիգրան Նաղդալեանը սուս ու փուս հրաժարւեց

Պատրաստեց  
Ս. Դամբարձումեանը

«Արդեօ՞ք Ազգային Հեռուստատեսությունը ազգային նպատակներ էր հետապնդում».- այսպէս է իր հարցը ձևակերպում զինդատախազ Գագիկ Ջահանգիրեանը: Բանի որ սփիւքբահայերը եւս հնարաւորութիւն ունեն դիտելու ազգային հեռուստատեսութեան հաղորդումները, նշանակում է, որ կարող ենք նաեւ ունենալ իրենց կարծիքը ազգային հեռուստատեսութեան վերաբերեալ:

Մեզ համար յատկապէս հետաքրքիր է «Հայ լուր» ծրագիրը, որի ժամանակ լուրեր եւ մեկնաբանութիւններ են տրուում հայրենիքի մասին: Ազգային հեռուստատեսութեան կողմից տարած աշխատանքները կարելի է բաժանել երկու փուլի. առաջինը՝ դա մինչեւ ազգային հեռուստատեսութեան փակ բաժնետիրական ընկերութեան լիազօր ներկայացուցիչ, ՀՅԳ-ի ղեկավար անդամ եւ ՀՅԳ-ի կողմից ստեղծած սկաուտական կազմակերպութեան պատասխանատու ու ազգային հեռուստատեսութեան փոխտնօրէն Յարութիւն Յարութիւնեանի ձեռքակալումն է՝ Վազգէն Սարգսեանի, Կարէն Դեմիրճեանի ու խորհրդարանի միւս անդամների սպանութիւնների հետ կապած մեղադրանքներով, եւ երկրորդը՝ նրա կալանաւորումից յետոյ տարուող աշխատանքների փուլը:

Թում է, թէ երկար տարիներ ինչ-որ ուժեր ամէն կերպ աշխատել են իրենց ազդեցութեան տակ վերցնել ժողովրդի հոգեւոր աշխարհը: Այդ նպատակով նրանք ծրագրել էին իրենց ձեռքում ունենալ որոշ լծակներ, որոնցից մէկն էլ հեռուստատեսութիւնն էր, այն էլ «Ազգային» կոչւածը: (Իհարկէ կան նաեւ ուրիշ լծակներ, օրինակ դրանցից մէկը սկաուտական շարժումն է, որը մեծ կապեր ունի արտասահմանեան տարբեր երկրների հետ, եւ որը, ըստ

պատմական տւեալների, միշտ յարմար միջոց է եղել գաղտնի կազմակերպութիւնների համար՝ իրենց նպատակները իրականացնելու տարբեր զարգացող երկրներում: Դրա վառ օրինակներից է հանդիսանում շահի օրօք Իրանի սկաուտական շարժման ղեկավար՝ Դոկտ. Հոսէյն Բանայիի արտասահմանեան գաղտնի գործակալութեան գործակից լինելը): Մինչեւ այդ ձեռքակալութիւնը շատ չէր զգացում Հայաստանի ազգային հեռուստատեսութեան հակապետական քաղաքականութիւնը, իհարկէ պարզ երեւում էր, որ ազգային արժեքները երկրորդ պլանի են մղում եւ մեծ տեղ են տրուում ամերիկեան ու Եւրոպական մշակոյթին եւ բարբերին, սակայն դրանք կատարում էին շատ վարպետօրէն (Ազատութիւն Ռադիոկայանի օրինակին հետեւելով), կամ էլ անգիտակցաբար, ինչը թոյլատրելի չէ պետական մի օրգանի, որը կոչւում է «Ազգային Հեռուստատեսութիւն»:

Մի շարք ձեռքակալումներից յետոյ միայն, կարծես թէ, երեսաց ազգային հեռուստատեսութեան իսկական դէմքը: Կարելի է բերել օրինակներ, դրանցից մէկը ՀՀ խորհրդարանի նախագահի այցելութիւնն էր ԱՊՀ երկրներ, որը հեռարձակուեց միայն կէս ընթացքում, մինչդեռ, ըստ ԱԺ-ի նախագահ՝ պրն. Արմէն Խաչատրեանի, հեռուստատեսութեանը տրուել էր մի քանի ընթացքներ: Վերջերս մարտի 10-ին, երբ Հայաստանի ժողովուրդը անհամբեր սպասում էր զինդատախազ Գագիկ Ջահանգիրեանի ելոյթին եւ հարցուպատասխանին, Արմէնայրէսի դահլիճում, շատերը կարծում էին, թէ հնարաւորութիւն կունենան ամբողջութեամբ դա դիտել ազգային հեռուստատեսութեամբ, սակայն այդ ասուլիսի հեռարձակման համար եթէ տրամադրուեց 5 ընթացք սահմաններում: Մի հետաքրքիր ծրագիր էլ կար «Օրակարգ» անուն տակ, որը վարում էր Տիգրան Ռուբինեանը, այստեղ անկողմնապաշտօրէն հարցազրոյց էր վարում բոլոր քաղաքական կուսակցութիւնների լիդերների կամ ղեկավարների հետ, սակայն կարծես, ազգային հեռուստատեսութեան տնօրէն պրն. Տիգրան Նաղդալեանին դուր

չէր եկել, եւ այդ ծրագիրը հանելով գործը հաստ այն բանին, որ աշխատանքից հեռացուեց Տիգրան Ռուբինեանը: Եւ շատերն են հեռացել, յատկապէս նրանք, ում քաղաքական հայեացքները չեն համընկել պրն. Տիգրան Նաղդալեանի քաղաքական գաղափարներին եւ, կամ, նրանք, ովքեր դէմ են եղել ազգային հեռուստատեսութիւնը ինչ-որ քաղաքական ուժի համար քարոզչութեան լծակ դարձնելու խնդրին: Միեւնոյն ժամանակ պէտք է նշենք այն հանգամանքը, որ զինդատախազին 5 ընթացք արեւ եթէր չի տրամադրուում, սակայն «Հայ լուրը 10 ընթացք արեւ է հեռարձակում Տիգրան Ալվարդ Պետրոսեանի քաղաքական հարցերի մեկնաբանութիւնը, 10 ընթացք տեւողութեամբ ժամանակ է տրամադրուում պրն. Վահան Յովհաննիսեանին, էլ չենք ասում, որ տարբեր հարցերի մեկնաբանութեան համար ազգային հեռուստատեսութիւնը մշտապէս դիմում էր պրն. Վահան Յովհաննիսեանին, կամ էլ պրն. Պարոյր Հայրիկեանին: Վերջինս արդէն մեծ աշխատանքներ է տանում հոկտ. 27-ի դէպքերի կապակցութեամբ, մարդասպանների իրաւունքները պաշտպանելու ուղղութեամբ:

Գործը հասել է այնտեղ, որ նրանք պայքարում են որպէսզի միջազգային «զիտողներ» բերեն Հայաստան եւ իրենց հսկողութեան տակ վերցնելով այդ հարցը՝ ապահովեն մարդասպանների «անվտանգութիւնը»: Կարծես թէ Հայաստանում այլ բանտարկեալներ չեն եղել, կամ այդ պարոնները նոր են գլխի ընկել, որ բանտարկեալները նաեւ ունեն իրաւունքներ, եւ պէտք է ազգային հեռուստատեսութիւնը արտացոլի նրանց իրաւունքները, կամ թէ պաշտպանի Վազգէն Սարգսեանի ու Կարէն Դեմիրճեանի սպանողների շահերը՝ այդ նպատակով եթէ տրամադրելով: Դրա վառ օրինակն էր փաստաբաններին ազատ ու անսահման եթերի տրամադրումը՝ առանց որեւէ փաստի վրայ հիմնելու, մթնոլորտի շիկացումը եւ պետական քննիչ մարմնի հանդէպ անվստահութեան մթնոլորտի սերմանումը: Եւ այդ էր պատճառը, որ հետևեցին հետագայ դէպքերի հոլովոյթները: Ողջունելի է ցանկացած

մարդու կողմից կաշտակերության դեմ տարող պայքարը, բայց ողջունելի չէ այն քաղաքական որևէ ուժի մեծարման միջոց դարձնելը, ինչը ամիս կհանդիսանայ՝ իսկական մեղատրոններին քողարկելու: Ինչպես ենք կարող որակել այն երեւոյթը, որ ազգային հեռուստատեսութեամբ պրոպագանդում է, թէ երիտասարդ հայ աղջիկները արտագաղթելու եւ տարբեր երկրներում որեւէ ընտանիքում աշխատանքի անցնելու (ծառայելու) համար, կարող են դիմել այս ինչ ընկերութեանը, որը կկարգաւորի բոլոր գործերը: Մեր սահմաններից դուրս է ազգային հեռուստատեսութեան գործունէութեան վերաբերեալ մանրամասն հետազոտութիւն կատարելը, դա պէտք է կատարի ՀՀ համապատասխան մասնագէտների կողմից, բայց սփիւռքում լինելով այսքանն էլ մեզ համար քաւական է, որպէսզի որեւէ կարծիք

կազմենք այդ հեռուստատեսութեան մասին:

Միասնութեան Դաշինքը բազմիցս զգուշացրել է Հայաստանի նախագահին այդ հեռուստատեսութեան գործունէութեան վերաբերեալ, որը, ըստ իրենց, անուշադրութեան էր մատուել նախագահի կողմից: Եւ վերջապէս Միասնութեան Դաշինքը նախագահից պահանջեց ազգային հեռուստատեսութեան տնօրէնի հրաժարականը, ու նախագահը փոխարէն ըմբռնի հարցի բուն էութիւնը, նշեց, որ ոչ ոք իրաւունք չունի իր հետ վերջնագրերով խօսել: Նախագահը երեւի հարցը լաւ չէր ընկալել ու կարծել էր, թէ այն մամուլի եւ խօսքի ազատութեան դէմ է, եւ դա պատճառ հանդիսացաւ, որ Միասնութեան դաշինքի դէմ ելոյթ ունենայ, ինչը ուրախութիւն պատճառեց որոշ ուժերի, սակայն Միասնութեան Դաշինքի և ՀՀ

նախագահի հետագայ աւելի կշռադատած համագործակցութիւնը և քայլերը յուսադրող եղան: Վերջապէս նախագահին էլ ընդունեց, որ ազգային հեռուստատեսութիւնը ազգային նպատակներին չի ծառայում, այլ խմբային ու անհատական շահեր է հետապնդում: Այսպիսով ազգային հեռուստատեսութեան գործադիր տնօրէնը սուս ու փուս հրաժարեց, մինչդեռ, ինչպէս լուրերից ենք տեղեկանում, նա յայտնել է, որ հեռանալու ցանկութիւն չունի եւ նախագահին էլ իրաւունք չունի իրեն հեռացնել: Ուրեմն կարելի է հասկանալ, որ Միասնութեան Դաշինքի ճնշման ներքոյ եւ նախագահի կամքով է նա հրաժարել: Հիմա մեզ մնում է յուսալ, որ ազգային հեռուստատեսութիւնը այսուհետ իրօք ազգային նպատակներ կհետապնդի և հեռու կլինի որեւէ հատածային ու խմբային շահերի հետապնդումից:

**(Խոհեր)**

**Ղարաբաղը եւ ղարաբաղցին**

**Վ.Ալեքսանեան**

Իւրաքանչիւր երկիր, ամեն մի ազգ ու ժողովուրդ ունի իր նկրտական յենարանը: Երբ տւեալ ժողովուրդն ունի հարուստ պատմութիւն եւ հերոսական անցեալ, երջանիկ է, եւ այդ երկիրը դառնում է մշակութային ու քաղաքական կեանքի կենտրոն: Իսկ երբ ճակատագիրը հալածում է տւեալ ազգին, նա դառնում է ազգային կեանքի պատար, յոյսերի ու վերածննդի գրաւական: Հայաստանի համար հէց այս վերջին դերն է խաղացել եւ խաղում է Լեռնային Ղարաբաղը, որին բնութիւնը պարզեւել է զարմանալի գրաւութիւն, վերապահել վիթխարի նշանակութիւն: Արեւելահայկական Գեղամայ լեռնապարի շարունակութիւնը հանդիսացող Արցախ աշխարհի անառիկ բարձունքներում աւելի քան երկու հազար տարիների ընթացքում հայ ժողովուրդը դիմագրաւել է քոչւոր ցեղերի գրոհներից՝ պահպանելով իր մշակոյթը, իր ազգային դէմքն ու դիմագիծը: Երկրամասում ազգագրօրէն, տնտեսապէս եւ լեզուական ուրոյն կոլորիտով լինելով միածոյլ, հնդեւրոպական ցեղախմբի ժողովրդի համակենտրոն միջավայր, Ղարաբաղը դարձել է Հայաստանի միջնաբերդը, նրա արեւելեան ամուր բազուկն ու յենարանը: Այդպիսին եղել է անցեալում, այդպիսին է այժմ, այդպիսին կմնայ յաւերժօրէն, քանի որ Հայաստանի սիրտը՝ Արարատեան դաշտավայրը, անհնար է պաշտպանել առանց տէր լինելու Ղարաբաղի, առանց նրա գոյատեւումի: Պատմութեան դաժան քառուղիներում շատ է վտանգւել Ղարաբաղի եւ ղարաբաղցու կեանքն ու գոյութիւնը. արիւննուշտ, ամբարիշտ թուրքական վայրենաբարոյ ցեղերը մշտապէս բախել են Ղարաբաղի ամրութիւններին, այդ երկրամասի անկտորում կամքի տէր ժողովրդի բազկի հզօր ուժին: Թէեւ երբեմն նրանք կարողացել են Ղարաբաղ թափանցել լեռների ու արագընթաց գետերի հովիտներով, սակայն նրանց չի յաջողել գէթ մէկ անգամ երկար մնալ երկրամասում: Անկոչ հիւրերին իրենց անդաստանից դուրս վճռելու խնդիրը ղարաբաղցու համար եղել է պատիւ գործ: Հին ժամանակներում Սիւնեաց երկրամասի իշխանական մելիքութիւնները սեփական ուժերով են զօրավիգ եղել իրենց հողին, իրենց միասնութեամբ պատար դարձել ուխտադաւ թշնամիների դէմ:

Բնութիւնն ու պատմութիւնը Ղարաբաղում ստեղծել են արհաւիրքներից ու բռնութիւններից չընկճող, եթնիկապէս ցայտուն արտայայտած մի ժողովուրդ: Սփռած ամբողջ աշխարհում, ամենուրեք ղարաբաղցիները հեշտութեամբ կարող են ճանաչել իրենց հայեցի իւրօրինակ կենցաղով, մտքի ու մտաւոր արարումի իմաստութեամբ, բանի բուն գործելակերպով, ձեռքի ու շնորհքի արարչութեամբ: Գործունէութեան լայն թափ, անձնագոհ քաջութիւն, վտանգալից խիզախութեան հակում, ինքնավստահութիւն, իւրայատուկ յամառութիւն, ուղղամիտ հաստատականութիւն, նահապետական ազնիւ բարքերի ու սովորութիւնների երկրպագութիւն եւ այլն - ահա ղարաբաղցու համակրելի գծերը ոչ ամբողջութեամբ:

Ղարաբաղցու խառնուածքը կերտել, ձեւաւորել է պատմատնտեսական այնպիսի պայմաններում, երբ մարդը ստիպւած էր մի կաթիլ ջուր աղերսել Աստծուց, ինչպէս երկնային մանանա, ուր հացն անգամ ստիպւած էին քարից քանել: Այստեղ այս երկրամասում, ամեն ինչ զարմանալի է՝ քար ու թուփից սկսած, մինչեւ բնութեան արարիչը՝ մարդը: Ինքնատիպ են ղարաբաղցու խօսքն ու գրոյցը, երգն ու հորովելը, պարերը՝ նազեմազ ու կենսախիճը, աղջիկները եղնկառտ, որ կարապնավիզ, կժերն ուսած՝ ջուրն են իջնում այգաբացին, թովռուն, ինչպէս հաւքերը արեւազօծ զարմանը:

Արեւի լոյս կայ ղարաբաղեան պոեզիայում, դարերի կանչ՝ նրա երգերում, որոնցով ղարաբաղցին սէր ու աղօթք է առաքում առ Աստած:

# Դահե Ֆաջրի փառատօնից

Այս տարի «Դահե Ֆաջրի» փառատօնին մասնակցելու նպատակով, Իրանում էր գտնուում Հայաստանի Ֆիլիարմոնիկ նագախումբը: Պատեհ առիթն օգտագործելով հարցազրոյց ունեցանք նագախմբի խմբավար, հանրայայտ երաժշտագետ Լորիս Եզնաուորեանի հետ: Ստորև ներկայացնում ենք այդ հարցազրոյցը:

**Հ.-Թոյլ տւեք նախեառաջ «Լոյս» երկշաբաթաթերթի անունից շնորհակալութիւն յայտնել Ձեզ, ձեր ժամանակը մեզ տրամադրելու համար: Կիսնդրեմ Ձեզ, որ ներկայացնէք նագախումբը:**

Պ.-Հայաստանի Ֆիլիարմոնիկ նագախումբն աշխատում է 60 տարուց ի վեր: Նա իրայատուկ է, քանի որ նրա բոլոր անդամները հայ են, ծնւած՝ Հայաստանում, եւ այս առումով այսպիսի նագախումբ երեւի չկայ: Խումբն ունի 120 անդամ եւ շաբաթական հերթական համերգներ՝ ճոխ ծրագրերով: Նրա ձայնագրութիւնները տարածուած են ողջ աշխարհում: Նագախումբը ելոյթ է ունեցել միջազգային րեմերում, ներկայացրել է հանրայայտ կոմպոզիտորներից ստեղծագործութիւններ, որոնց շարքում են՝ Արամ Խաչատրեանը, Կոմիտասը, Վիլտորը, Անդրէ Վալսը եւ ...

Այնպէս որ վերջին 10 տարայ ընթացքում նագախումբը հիւրախաղերով մեկնել է Ամերիկա, Կանադա, Իրան, Յունաստան եւ մի շարք այլ երկրներ: Ամենուրեք բարձր են գնահատել նագախմբի ելոյթները:

**Հ.- Ինչպէ՞ս եղաւ, որ Իրան ժամանեցիք եւ որն է ձեր առաքելութիւնը:**

Պ.-Մենք ընդառաջելով հրաւերին Իրան ժամանեցինք Դահե Ֆաջրի փառատօնին մասնակցելու համար: Հրաւիրող կողմը մեծ ցանկութիւն ունէր, որ մենք կատարէինք «Ռոստոմ եւ Չոհրաբի» հատուածը Շահնամէից: Անցեալ շաբաթ դա կատարեց եւ աննախընթաց յաջողութիւն ունեցաւ: Պատմական իրադարձութիւն էր այն առումով, որ Իրանում առաջին անգամ լինելով բեմի վրայ մեներգեց կիւն երգչուհին:



**Հ.-Ինչպէ՞ս էք տեսնում Իրան-Հայաստան մշակութային ներկայ կապերը, եւ այդ կապերի զարգացման հեռանկարը:**

Պ.-Իրանական - հայկական մշակութային կապերը եղել են դարեր շարունակ, երկու հազար տարուց ի վեր, եւ երբեւիցէ չեն ընդհատուել, միշտ էլ եղել են եւ ընդմիշտ կշարունակուեն: Իհարկէ Հայաստանի անկախութիւնից յետոյ այդ կապերը պաշտօնական բնոյթ են կրում: Մեծ մասամբ այդ յարաբերութիւնները կատարուած են պետական մակարդակով, բայց լինում են նաեւ անհատական, կազմակերպութիւնների եւ միութիւնների մակարդակով: Մենք կարողացել ենք թարգմանել Իրանի դասական բանաստեղծների, ի շարս՝ Ֆիրդոսու, Հաֆեզի, Խայեամի, Սաադիի եւ շատ ուրիշների հոյակապ ստեղծագործութիւնները: Կան նաեւ պարսկերէնով բազում այլ թարգմանութիւններ: Այդ թարգմանութիւնների միջոցով մեր գրականութիւնը ներկայացել է պարսիկ ընթերցողներին:

**Հ.-Ինչպէս ակնառես եղանք Ձեր ներկայացրած ծրագիրը բազմաբնոյթ էր: Հետաքրքիր է իմանալ, թէ ինչպիսի երաժշտութիւն է կազմում Ձեր ծրագրի առանցքը:**

Պ.-Մեր նպատակն է նախ եւ առաջ հայկական երաժշտութիւնը ներկայացնել աշխարհին. հետեւաբար առանցքը կազմում է ազգային երաժշտութիւնը: Այս առումով մենք իհարկէ իրայատուկ չենք: Ինչպէս միւս նագախմբերը՝ կատարում ենք աշխարհի լատագոյն ստեղծագործութիւնները՝ հայ եւ օտար կոմպոզիտորներից:

**Հ.- Դուք ձեր ելոյթում հրաշալի բնութագրեցիք, թէ մշակոյթն ու հասարակ են մեր ժողովրդի գոյատեւման երաշխիքը, իսկ կուսակցութիւնները կզան ու կերթան: Ձեր**

**կարծիքով, այսօր պետական այրերը եւ քաղաքական դէմքերը ինչքանո՞վ են հաւատում եւ իրականացնում այդ հրաշալի գաղափարը:**

Պ.- Պետութեան եւ պետական այրերի մասին ես չեմ կարող խօսել: Պետութիւնը ինքը պիտի պատասխանի, բայց ինչպէս, որ ես արտայայտում եմ հաւատքի եւ մշակոյթի կապակցութեամբ, այն նպատակով չէ, որ քննադատեմ կուսակցութիւնները: Ամէն մարդ իր անելիքն ունի, իր դերն ու նպատակներն ունի: Իմ ասածն ընդդէմ նրանց գաղափարախօսութեան չէ: Ամէն մարդ գտնում է իր ճանապարհով պէտք է փրկի ժողովրդին: Իմ ասածը պարզապէս այն է, որ հայ ժողովրդին միաբանելու համար հաւատքի եւ մշակոյթի ճամբով պէտք է քայլել: Մենք դարեր շարունակ կուսակցութիւններ չենք ունեցել: Կարճ ասած, հաւատքը եւ մշակոյթը միաբանում են, իսկ կուսակցութիւններն առհասարակ ժողովրդին բաժանում են: Եթէ մարդը միայն կուսակցութեան գաղափարներով է շարժուում եւ մոռանում է իր արմատները, դա է, որ վտանգաւոր է:

**Հ.-Արդեօ՞ք Հայաստանի պետութիւնը Ֆինանսատրում է ձեր աշխատանքները, քանզի համոզուած ենք առանց պետական հովանաւորութեան աշխատանքը ցանկացածի պէս արդիւնաւետ չի լինի:**

Պ.- Պետութիւնը հոգս տանում է, բայց փող չունի, եկամուտ, արտադրանք չունի: Ցաւօք ժողովուրդն էլ փող չունի, եւ երբ ժողովուրդն աղքատ է, պետութիւնն էլ աղքատ է: Գործարար մարդիկ քիչ կան մեր երկրում, մասնաւորապէս՝ գիտակից հարուստ մարդիկ: Այսպէս, դժուար օրերին փորձում ենք, եւ տեսնենք, յուսանք, որ շուտով բարելաւի ամէն ինչ:

**Հ.- Ինչպէ՞ս էք տրամադրուած Հայաստանի այն արեւտագետների նկատմամբ, որոնց փոխարինում էք դուք:**

Պ.- Ես որևէ մէկին չեմ փոխարինում: Ամէն մարդ իր տեղն ունի եւ իր խօսքն ունի ասելու: Ես ներկայացնում եմ ինձ, չեմ փոխարինում ուրիշին:

**Հ.- Ձեր կարծիքով, այսօր հայ երաժշտութիւնը միջազգային ասպարեզում ի՞նչ մակարդակով է ներկա-**

**յանում: Այժմ մենք անցեալի համեմատութեամբ վերե՞լք ենք ապրում, թէ անկում:**

Պ.- Հայ երաժշտութիւնը միշտ վերելք է ապրում: Միայն թէ հայ ժողովուրդը պարադոքս վիճակի մէջ է: Մի կողմից պատրաստում է հոյա-կապ



արեստագէտներ, կոմպոզիտորներ, նկարիչներ, դերասաններ եւ բանաստեղծներ, միւս կողմից չի հովանաւորում իր իսկ պատրաստած տաղանդներին: մեր ժողովուրդը շատ քիչ դէպքերում է, որ ձայնագրութիւններ, գրքեր եւ նկարներ է գնում: Ի վերջոյ արեստագէտն ապրել է ուզում: Նա պիտի կարողանայ իր արեստի միջոցով իր անձնական կեանքն ապահովել: Մեր ժողովուրդը տէր չի կանգնում իր տաղանդներին, հետեւաբար նա ծնում է տաղանդներ, բայց այդ տաղանդները թաղում են՝ որպէս յուսահատ մարդիկ: Բանի՞ հայ է գիրք կարդում, ո՞րն է մեր գրականութիւնը: Մեր հրատարակած գրքերը շատ չնչին են: Մենք լաւ ընթերցողներ երբեւիցէ չենք ունեցել:

**Հ.- Այստեղ պարտաւոր եմ Ձեր խօսքերն ընդհատել, քանի որ գտնում եմ Ձեր արտայայտութիւնների մեծ մասը չի համապատասխանում գոյութիւն ունեցող փաստերին: Առանց որեւէ դիրքորոշման, հէնց որպէս օրինակ, Խորհրդային Հայաստանի օրօք Հայաստանում բազմաթիւ գրքեր են հրատարակել, եւ մասնաւոր մի՞նչեւ հարիւր հազարի հասնող տպաքանակներով: Միթե՞ կարելի է այս բոլորն անտեսել:**

Պ.- Ես չեմ կարծում այդպիսի տպաքանակ գոյութիւն ունենալ: Մեր ժողովուրդը գլուխ գովող է, իսկ գլուխ

գովալը լաւ բան չէ: Եթէ խորհրդային շրջանում այդքան գրքեր են հրատարակել եւ կոպեկներով ծախել, դա նրանց բաղաբաղանութիւնն է եղել. մարդիկ ուրիշ բան չեն ունեցել, գրքերը գնել են, բայց չեն կարդացել: Ես չեմ ընդունում այն տեսակէտը, որ մենք հոյակապ ընթերցողներ ենք: Այժմ մեզ մօտ հազիւ թէ 500 հոգի լաւ ընթերցողներ գտնեն: Գրողը գիրքը հրատարակում է եւ ձրի նւիրում մարդկանց:

**Հ.- Այլ քեզ բան ... Լաւ, այս հարցի քննարկումը թողնենք ընթերցողներին: Անշուշտ նազախմբի բազմանդամ լինելը նպաստաւոր է, բայց դա միւս կողմից չի՞ դժարացնում Ձեր աշխատանքի ընթացքը:**

Պ.- Ընդհակառակը, արեւի դիրքին է դեկավարել հազար հոգուց բաղկացած մի խումբ, որը կարգապահութիւն ունի, քան մի հոգու, որ անկարգապահ է: Ուրեմն յաջողութեան երաշխիքը կարգապահութիւնն է: Մեր հիմքերը դրած են կարգապահութեան եւ պարտաճանաչութեան վրայ: Մենք աշխատում ենք ամէն օր, օրական 5-6 ժամ: Հայաստանում շաբաթական համերգներ ենք ունենում, ձայնագրութիւններ ենք կատարում: Մեզ մօտ ամէն մարդ իր պարտականութիւններին լաւապէս ծանօթ է, իր անելիքները քաջ գիտի:

**Հ.- Ի՞նչ խորհուրդ կտայիք մասնաւոր մեր պատանհի եւ երիտասարդ սերնդին: Անշուշտ մեր նոր սերունդը սիրով կհետեւի Ձեր խորհուրդներին:**

Պ.- Չեմ կասկածում, որ կհետեւի խորհուրդներին, բայց այսօր երիտասարդութիւնը առհասարակ չի ենթարկում որեւիցէ մէկի խորհուրդներին: Ինձ թում է աշխարհը գնալով փոքրանում է: Եթէ մի օր աշխարհի մի կէտից միւս կէտին հասնելու համար տարիներ էր պէտք, այսօր մարդը ինտերնետի մի կոճակը սեղմելով, մի ակնթարթում կապւում է աշխարհի որեւէ ծայրամասում գտնող ցանկացած անհատի հետ: Աշխարհն այնքան է փոքրացել, որ այս փոքրութեան մէջ մեծերը փոքրերին կուլ են տալիս: Այսօր հայը եթէ կորցնի իր հաւատը եւ մոռանայ իր մշակոյթը, կձուլի, կզնայ: Այդ վտանգը բոլորից առաջ սպառնում է թուլ փոքր ազգերին, եւ եթէ ուզում ենք հայ մնալ, պէտք է ամուր պահենք մեր հիմքերը, մեր մշակոյթը: Մա կլինի իմ խորհուրդը: Գնալով սահմանները, ազգութիւնները, լեզուները երկրորդական հարցեր են

դառնում: Ուստի եթէ ազգը պէտք է գոյատեւի, պէտք է զարգանայ նրա մտաւոր, հոգեւոր եւ մշակութային աշխարհը: Այս րոպէիս Ամէրիկան, Անգլիան, եւ վաղը երեւի Չինաստանը, միլիոններ է ծախսում եւ կծախսի: Յաւօք հայ պատանին ծանօթ չլինելով իր մշակոյթին, սկսում է համակրել խորթ, անհարազատ, բայց արտաքուստ գրաւիչ մշակոյթին:

**Հ.-Եթէ կան հարցեր եւ պարզաբանութիւններ, որ մեր հարցերում տեղ չեն գտել, խնդրում եմ արծարծել:**



Պ.- Շատ ցանկալի կլինէր, որ իրանահայերը չքէին իրենց ծննդավայրը: Նրանք դարեր շարունակ մաքառել են, աշխատել եւ մի կենսաւրախ գաղութ ստեղծել, եկեղեցիներ կառուցել, դպրոցներ եւ մշակութային կենտրոններ հիմնել, իսկ այսօր տեսնում ենք՝ ո՞մանք թողնում են այդ բոլորը եւ չգիտես,թէ ուր են գնում: Չպիտի թողնել, որ այդ բոլոր մշակութային կենտրոնները թանգարան դառնան: Ճիշտ է, իրաւունք չունեն կամքը միայն թելադրել, բայց ես լիաշոյս եմ շուտով կդադարի այս երեւոյթը եւ վերջ կարի դրան: Յաւօք, այսօր ոչ միայն Իրանում, Հայաստանում էլ նոյնն է, Լիբանանում էլ: Դա ազգային բնաւորութիւն է, հայի սովորութիւն: Հայերս մի՞նչեւ որ դառնանք ժողովուրդ, տարիներ կտեւի: Մենք հիմա պարզապէս հայ ընտանիքների միութիւն ենք: «Ժողովուրդ» բառը մեզ դեռ չի վերաբերում, այլ նրան՝ ով առնուազն 100 տարի իր հողի վրայ կապրի եւ անկախութիւն կունենայ: 700 տարի չենք ապրել մեր հողի վրայ, արմատներ չունենք, թեւտոր թռչունի պէս ենք: Յուսանք, որ ազգը՝ «Ժողովուրդ» կդառնայ, եւ ժողովուրդ դառնալով կամբարպետի իր հողի վրայ ու որտեղ, ինչ որ դրել է, ինքը տէր կկանգնի այդ ամենին, դրանք թանգարան չի դարձնի:

Վերջում ողջունում եմ ձեր մուտքը՝ հայ մամուլի ընտանիք: Յուսով եմ, ինչպէս ձեր թերթի անունից է երեւում, Մեարդպեան մշակոյթի յատկապէս ջանակիրը դառնալով, լոյսը տանք հայ ընտանիքների օջախները:

*Հարցազրոյցը վարեց Վահիկ Վարդանեանը*

# «Շրաշամանուկը» հրաշք գործեց

Չայ մանուկն անգամ բարձր արևստով հիացնում է իր հանդիսատեսին, եւ կարծես ուզում է հաստատել, որ հայր ծնած օրանից մշակոյթով զինւած է: Չայ ժողովրդի կեանքը նման օրինակներով լի է: Դրանց շարքում կարելի է դասել «Շրաշամանուկ» խմբի ելոյթները: Մի խումբ, որի անդամները ընդամենը 3-6 տարեկան երեխաներ էին: Բայց ներկայացրած արևստի բարձր մակարդակը մոռացութեան էր տալիս նրանց տարիքային հանգամանքը:

Օտերս նրանց ելոյթները մեծ խանդավառութիւն էր ստեղծել բեհրանահայ համայնքում: Այդ ելոյթների շնորհիւ նոր սերունդը մի անգամ եւս համոզւեց, որ իր գոյատեւման երաշխիքը իր ազգային մշակոյթն է: Գնահատանքի է արժանի Չայ Կաթողիկէ Առաջնորդարանի բարիացակամութիւնը, որի շնորհիւ Չայաստանի «Շրաշամանուկ» խումբը թեհրան ժամանեց:

Ստորեւ ներկայացնում ենք վերոյիշեալ խմբի երիտասարդ ղեկավար օր. Նունէ Թամազեանի հետ ունեցած հարցազրոյցը:

**Լոյս- Նախ քոյլ տւեք Լոյս երկշաբաթաթերթի անունից շնորհակալութիւն յայտնել Ձեր քանկագին ժամանակը մեզ տրամադրելու համար: Կյանքը ներկայանաք:**

Պատ.-Նունէ Թամազեան, «Շրաշամանուկ» համոյթի գեղարւեստական մասի ղեկավար:

**Հարց.- Կյանքը նախ տեղեկութիւններ տաք Ձեր ղեկավարած խմբի մասին:**

Պատ.- Խումբը նոր է ձեւաւորւել եւ կազմել, սակայն հասցրել է արդէն բաւականին համերգներ կազմակերպել եւ Հայաստանում, եւ Հայաստանից դուրս: Շատ հրաւերներ ենք ունեցել արտասահմանեան երկրներից, ցաւօք այդ երկրներից մի քանիսում մեզ չի յաջողւել ներկայ գտնել՝ կապւած Ֆինանսական խնդիրների հետ: Իսկ ինչ վերաբերում է Իրան ժամանելուն, ապա մենք եկանք վարդապետ Թոսունեանի հրաւերով, որին մենք խորին շնորհակալութիւն ենք յայտնում ցուցաբերած հոգատարութեան համար:

**Հարց.- Հիւրախաղեր ունենալով սփիւրքում, ի՞նչ նպատակներ էք հետապնդում:**

Պատ.- Մեր առաջին նպատակն է՝ Հայաստանից դուրս հայերին, հայ մանուկներին համոզել, որ իրենք շատ բաներ են կարող անել, եւ որ իրենք հայ են ու տեսնելով հայ մանուկին, պատկերացնեն իրենք իրենց: Մեր նպատակն է, նաեւ, քաջալերել սփիւռքահայերին, նրանց ծանօթացնել հայ արւեստին, եւ ընդհանրապէս «Հայ» անանը:

**Հարց.-Ո՞ր երկրներում էք հիւրախաղերով հանդէս եկել:**



Պատ.- Մենք եղել ենք միայն Հալէպում եւ Սիրիայի մի քանի քաղաքներում, ուր մասնակցել ենք փառատօնի: Մեզ յաջողւեց 33 երկրներից մասնակցող բազմաթիւ խմբերից ընտրւած լաւագոյնների շարքը դասել եւ մրցանակով վերադառնալ Հայաստան: Հրաւերներ ենք ունեցել նաեւ Ֆրանսիայից եւ Լիբանանից, սակայն, ինչպէս նշեցի, չի ստացւել մեկնել:

**Հարց.- Խումբը հովանաւորներ ունի՞, թէ ոչ:**

Պատ.- Բացարձակ ոչ մէկից օժանդակութիւն չենք ստանում: Բոլոր մեր Ֆինանսական խնդիրները հոգում ենք մենք ինքներս, իսկ եթէ լինում են հրաւերներ եւ Ֆինանսաւորում, մենք չենք մերժում եւ, ինչպէս տեսնում էք, մենք այսօր այստեղ ենք: Իսկ հովանաւորներ գտնելով, մենք աւելի մեծ ճա-նաչում կստանանք:

**Հարց.- Իսկ պետութեան կողմից որեւէ հովանաւորութիւն չի՞ լինում:**

Պատ.- Բոլորովին: Մենք անհատ ձեռնարկութիւն ենք եւ մեր բոլոր ծախսերը հոգում ենք մենք՝ եւ ինքս:

**Հարց.- Ձեր պարապմունքները ի՞նչ յաճախականութեամբ են:**

Պատ.- Զանգի որ մենք գործ ունենք 3-6 տարեկան փոքրիկների հետ եւ շատ մեծ աշխատանք է պահանջում, մենք ստիպւած ենք լինում պարապել ամէն օր: Իհարկէ, պարապմունքների ընթացքում խաղեր են կազմակերպւում, ունենում ենք հոգեբանական դասընթացներ, աշխարհաճանաչ ենք դարձնում նրանց եւ այլն: Ամէն օր ենք պարապում նաեւ այն պատճառով, որ փոքրիկների մկանները չիսկւեն: Երեխաները ամէն օր մեծ հաճոյքով են յաճախում պարապմունքներին:

**Հարց.- Արդեօ՞ք դժար չէ փոքր տարիքի երեխաների հետ աշխատելը:**

Պատ.- Դժարութիւնները շատ մեծ են, շատ մեծ ջանքեր են պահանջւում, մեծ մտահոգութիւն է առաջ գալիս յատկապէս այն ժամանակ, երբ մտածում ես, թէ արդեօք կարող ես յաղթահարել եւ հասնել քո նպատակին: Բայց կարծում եմ, որ արդէն դժարութիւնները յետեւում են: Եւ եթէ սիրում ես աշխատանքը, ապա պէտք է քեզ մօտ ամէն ինչ ստացի: Իհարկէ պէտք է ասեմ, որ ինձ մեծ օգնութիւն է ցուցաբերում իմ օգնականը՝ Ջիւան Դարիբեանը:

**Հարց.- Իսկ տարբերութիւն կա՞յ մեծերի եւ փոքրիկների հետ աշխատելու մէջ:**

Պատ.- Իհարկէ, կայ եւ շատ մեծ է: Աշխատանքը փոքրիկների հետ մեծ ցանքեր է պահանջում:

**Հարց.- Իսկ ծնողները բարոյական օժանդակութիւն չե՞ն ցուցաբերում:**

Պատ.- Իհարկէ օժանդակում են: Բայց նրանք տարբեր են. ծնող կայ չափից աւելի է գնահատում, ծնող էլ կայ, որ մտածում է դա քո աշխատանքն է, քո պարտականութիւնը: Բայց դա ոչ մի կերպ չի խանգարում մեր աշխատանքներին: Երեխաները ինձ սիրում են, եւ էլ՝ իրենց: Եւ ծնողները մեր աշխատանքի արդիւնքը արդէն տեսնում են բեմի վրայ:

**Հարց.- Հետաքրքիր է ինձնալ, թէ Դուք ինչպէս էք խրախուսում Ձեր աշակերտներին:**

Պատ.- Իրենք իրենց արդէն խրախուսած են գգում հանդիսատեսի ծափերով, ծաղիկներով եւ համերգներից մնացած տեսաֆիլմերով:

**Հարց.- Կցանկանալի՞ք մատնանշել Ձեր ուսուցիչներից որեւէ մէկին, եւ Ձեր յարգանքը մատուցել:**

Պատ.- Մի գուցէ տարօրինակ կհնչի, բայց քոյլ տւեք հետեւեալ ձեռով պատասխանել ձեր հարցին. իմ ուսուցիչը եղել է իմ կեանքը, իմ հայրը, իմ ընտանիքը: Իհարկէ, ունեցել եմ շատ ուսուցիչներ, բայց ես իմ ապրած կեանքն եմ իմ ուսուցիչը համարում:

**Հարց.- Փաստօրէն, ինչպէս ես հասկացայ, շնորհիւ Ձեր ծնողներին է, որ Դուք հասել էք Ձեր նպատակներին:**

Պատ.- Այո:

**Հարց.- Իսկ աշխատանքը չի խանգարում Ձեր անձնական կեանքին:**

Պատ.- Ճիշտն ասած այնքան եմ տարած, նպատակադրւած եւ զբաղւած, որ իմ անձնականը դեռ չեմ տեսնում: Իմ անձնականը իմ աշխատանքն է:

**Հարց.- Եւ վերջում ի՞նչ ցանկութիւններ եւ պարգաւանումներ ունէք, որոնք կողողէք մեր ընթերցողներին:**

Պատ.- Նախ եւ շնորհակալութիւն եմ յայտնում եւ հրաւերի եւ շատ ջերմ ընդունելութեան համար: Բռտեր անգամ չեմ գտնում արտայայտելու իմ երախտապարտութիւնը իրանահայերին: Ուրախ եմ նաեւ ձեր կողմից կազմակերպւած հարցազրոյցի համար եւ յուսով եմ, որ կունենանք հետագայ համագործակցութիւն: Մենք պատրաստ ենք ծառայելու հայ ժողովրդին, հայ մանուկներին՝ որտեղ էլ, որ նրանք լինեն:

Իմ գոհունակութիւնը, իմ խորին շնորհակալութիւնը՝ ձեզ բոլորին: Մենք ձեզ սիրում ենք:

Չարցազրոյցը վարեց  
Վահիկ Վարդանեանը

**ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՒ  
ՀԱՅԵՐԻ  
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ  
ՊԱՏՄԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԵՋ**

*Էր. Գերմանիկ*

**2- ՈՒՄԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹԻՒՆ**

- **Ն.Ի.Բուլգակով.**- «Բայազետի հերոսական պաշտպանությունը», 1878:
- **Գ.Կ.Գրաղովսկի.**- «Փոքր Ասիայի 1877 թ.պատերազմը» 1878:
- **Մ.Վ.Ալեքսեև.**- «1877-1878 թթ. պատերազմը Ասիական ռազմա-քննում» 1892:
- **Պ.Գարկովենկո.**- «Ռուսաստանի պատերազմը Թուրքիայի դեմ» 1879:
- **Պ.Վ.Ալեքսանով.**- «Կովկասա-թուրքական ռազմաքննումի գործողու-թյունների համառոտ ռազմական ակնարկ» 1905:
- **Վ.Պոտսո.**- «Գեներալ-համ-հարզ Իւան Գալիցովիչ Լազարև» 1900, «Կովկասեան պատերազմը» հ. 3., 1888, «Կարաբաղի առաջին կամա-տրները», 1909, «1910 թ. Կարսի հանդիսությունները և Կարսի չորս գրոհները», 1911:
- **Վ.Ա. Աբազ.**- «Հայաստանի պատմություն», 1888:
- **Ն.Լ. Օւսեանի.**- «Ժամանակա-կից Թուրքիան», 1877, «Թուրքիայի ժողովուրդները» 1879:
- **Մ.Կովալենսկի, Պ. Միլիկով, Վ. Պոտսո, Մ.Նիկոլսկի, Ռ. Շտակե-բերգ, Պ. Բելեան, Լ. Կամարովսկի.**- «Հայերի դրությունը Թուրքիայում մինչև տերությունների միջամտու-թյունը 1895 թ.» 1896, «Թղթայրական օգնություն Թուրքիայում տուժած հա-յերին» 1897:
- **Ս.Ա.Ժգարեով.**- «Ռուսական քա-ղաքականությունը Արևելեան հար-ցում», 1896:
- **Կ. Խկալկովսկի.**- «Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը և օտարերկրեայ տերությունների դրու-թյունը», 1897:
- **Ծ. Տեմիշև.**- «Քաղաքակրթու-թեան ամօքը. բուրքական գործերի առթիւ», 1897:
- **Վ.Տ.Մանսկի.**- «Կանի վիլայեթը: Ռազմաստրատեգիական նկարա-գրություն», 1901:
- **Ի.Ի. Գուրբորով.**- «Հին ու նոր Թուրքիա», 1908, «Թուրքիա», 1912:

- **Վ.Վոդովոզով , Ա. ԿաՖան.**- «Թուրքական ժողովածու», 1909:
- **Ս. Գորեահով.**- «Բուժորդ և Դարդանելը», 1907:
- **Ի.Ռ.Բաժենով.**- «Մեր արտաքին քաղաքականությունը Մերձատր Արևելքում ազգային տեսակետից», 1913:
- **Մ.Միխայելով.**- «Արևմտ սուլ-թանը», 1912:
- **Ա.Ն.Մանդելշտամ.**- «Երիտթուր-քական տերություն», 1915, «Օտո-մանեան կայսրության ճակատագի-րը», Ֆրանս. 1917, «Ազգերի լիզան և նեծ տերությունները Հայկական հարցում», Ֆրանս. 1926:
- **Ֆ. Ա. Լուշտյեյ.**- «Միջազգային յարաբերությունները XIX դարի վերջին», 1960, «Եզիպտոսի զաւ-թումն ու ստրկացումը», հ. 2. 1963:
- **Ա.Ս.Երուսալիմսկի.**- Գերմանա-կան իմպերիալիզմի արտաքին քա-ղաքականությունը և դիվանագի-տությունը XIX դարի վերջին», 1948:
- **Ն.Ն. Կրաչենկո.**- «XIX դ. վերջի եւ XX դ. սկզբի միջազգային յարա-բերությունների պատմության ակ-նարկներ: 1878 թ. Բեռլինի կոնգրեսն ու Եռեակ դաշինքը», 1925:
- **Ս.Սկազկին.**- «Ավստրո-ռուս-գերմ. դաշինքի վերջը: 1878-1884:
- **Գ. Լ.Բոնդարենսկի.**- «Բաղդադի ճանապարհը եւ գերմանական իմպե-րիալիզմի թափանցումը Մերձատր Արևելք(1888-1903)», 1955:
- **Ա.Ս.Միլին.**- «Գերմանիայի Էքս-պանսիան Մերձատր Արևելքում XIX դարի վերջին», 1971, « Արևել-եան հարցում Բիսմարկի 1870-1890-ական թականների քաղաքակա-նության պատմությունից», 1976:
- **Ն.Գ.Կորսուն.**- «Համաշխար-հային պատերազմի կովկասեան ռազմաճակատի Սարիղամիշի օպե-րացիան 1914-1916 թթ., 1937, «Հա-մաշխարհային պատերազմի կով-կասեան ռազմաճակատի Էրզրումի օպերացիան 1915-1916 թթ., 1938:
- **Վ.Ա.Գուրկո-Կրեաժին.**- «Մերձա-տր Արևել. եւ տերությունները», 1925
- **Իւ. Կ. Կլիչինով, Ա.Սաբանին.**- «ԽՍՀՄ արտաքին քաղաքակա-նության փաստաթղթեր», հ. 1-3 1957-1979, «Մերը և Լոզանը», 1927, «Հայկական հարցը Լոզանի Կոնֆերանսում», 1926:

**Շար. 3**

*Օրինակելիները  
չեն մոռացում*

**Դալիթա  
Դաւթեան**



«Նա իր ազ-նըութեան ու վե-հութեան մեջ ան-մահացաւ».- այս խօսքերը մի առի-թով ասել է տիկ. Դալիթա Դաւթեանը՝ Հնդկաստանի խոշորագոյն դէմքերից մէկի՝ Ինդիրա Գանդիի կեանքին ու գործունէութեանը նիւրաձ դասախօսութիւններից մէկում: Մրանք միայն առիթի բերումով ասած խօսքեր չէին. տիկ. Դալիթեան լաւա-տեղեակ էր Հնդկաստանի մայիսին վարչապետի կեանքին վերաբերող շատ մանրամասնութիւնների, եւ իր համար սիմտիկ այդ կերպարին մշտապէս ձգտում էր նմանել: Ու ամէն անգամ, երբ խօսում էր հայոց պատմութեան մեջ հայ կանանց վեհանճն գործունէութեան, հայրենասիրութեան մասին՝ ընդգծելով դաստիարակութեան գործում հայ կնոջ մեծ դերը, չէր կարողանում չլիշել իր համար խորհրդանշական, Ինդիրա Գանդիի կերպարը: Վերջինիս անսահ-ման նկրածությունը իր երկրին՝ Հնդկա-ստանին, որի ազատութեան համար պայքարել էր դեռեւս պատանեկութիւնից սկսած մինչեւ իր կեանքի վերջին օրերը, տիկ. Դալիթեան օրինակելի էր համարում:

Նա գտնում էր, որ հայ կինը պէտք է օժտւած լինի առաջին հերթին հայրենա-սիրութեամբ, ազգասիրութեամբ, պայքա-րի ոգով, ազնութեամբ, բարութեամբ՝ չկորցնելով իր կանացիութիւնն ու հնայ-քը:Տիկ. Դ. Դաւթեանին ճանաչողները կարող են հաստատել, որ այս բոլոր յատ-կանիչները անփոփոխ էին նրանում, եւ այդ էր գաղտնիքը, որ նա որտեղ էլ աշխատելիս լինէր՝ դարձնում, թէ միու-թեան մեջ, կանանց, թէ գեղարեստական բաժիններում, մշտապէս վայելում էր շրջապատի սէրն ու համակրանքը:

Իր դասախօսութեան ժամանակ խօսելով նշած հերոսուհու մասին, տիկ. Դաւթեանը մի մեջբերում կատարեց Ֆրանսիայի քերթերից. «Հնդկաստանը կորցրեց իր մօրը» եւ ցաւով կենց այդ կորուստը: Իսկ մենք այսօր խոր ցաւով ենք նշում, որ երկու տարի առաջ մեր հա-մայնքը կորցրեց իր ազգանէր գործիչ-ներից մէկին՝ տիկ. Դալիթա Դաւթեանին:

Նրա հոգին իր բարի խորհուրդներով, ընդմիշտ կմնայ մեզ հետ: Իսկ նա, ինչպէս ինքն էր ասում իր սիմտիկ կերպարի մասին. «Իր ազնութեան ու վեհութեան մեջ անմահացաւ»:

*Ս. Դանբարձունեան*

# Հայկ Գարագաշ (1893-1960)


Գ. Խանենց

Հայկը ծնել է Թարիզ քաղաքում, Արեւմտահայաստանից գաղթած մի համեստ հայ ուսուցչի՝ Արտաշես Գարագաշի ընտանիքում 1893 թականին: Նախ ընտանիքով, երբ Հայկը հազիւ 4-5 տարեկան էր, տեղափոխուում են Ղազին, ապա Թեհրան: Այստեղ աւարտում է Սան-Լուի դպրոցի տարրականն ու միջնակարգը: Այնուհետեւ գործի է անցնում: Պաշտօնավարում է՝ «Բանկ Շահի», «Բանկ Օբոման» եւ ապա «Անգլո-Իրանեան Նաւթային Ընկերութիւնում»:

Ինքնակրթութեամբ սովորում է, կատարելագործում լեզուների մէջ: Լաւ գիտէր՝ պարսկերէն, Ֆրանսերէն, անգլերէն եւ ռուսերէն լեզուները եւ քաջածանօթ էր միջազգային գրականութեան հետ:

Հայկ Գարագաշը 14 տարեկանից նիրուել է թատերական գործին: Մասնակցել է՝ Արմենեանի, Մանելեանի, Սիրանուշի, Արուս Ոսկանեանի, Աւետեանի եւ Վ. Փափագեանի թատերախմբերին, որոնք հիւրախաղերով գալիս էին Թեհրան: Յետոյ անցնում է պարսկական թատերական ասպարեզ եւ նրա հիմնադիրներից մէկն է համարում: Իրանի դերասանների միութեան օրգան «Թատրոն» պարբերականը իր 1953 թականի ութերորդ համարի շապիկի առաջին էջում տպագրում է Հայկ Գարագաշի դիմանկարը եւ տալիս է նրա կենսագրականը, ուր գրում է.

«Շուրջ կէս դար է, որ Հայկ Գարագաշը Իրանի թատրոնի ասպարեզում փայլուն գործունեութիւն է ցուցաբերել, ներկայում ծերացել եւ զանազան պատճառների հետեւանքով հեռացել է թատրոնի ասպարեզից: Իրանի ժողովրդի համար, որը աղքատ է իրաւ արեստագէտներ ունենալուց, անշուշտ շատ ցաւալի է նման վարպետ արեստագէտին մեկուսացած տեսնել: Իրանի թատրոնի ռեժիսորներից ու դերա-



սաններից շատերը Հայկ Գարագաշի նախկին աշակերտներն են եղել: Նա այս տարիքում դեռեւս շարունակում է Թատրոնի Արեստից դպրոցում նորեկ աշակերտների ուսուցումը:

Հայկ Գարագաշը երիտասարդ տարիքից սկսած համագործակցում է Յովսէփ Միրզայեանի շնորհիւ կեանքի կոչած Չախ հոսանքին եւ 1920 թականից հրապարակ է հանում «Բորոխ» զաւէշտաթերթը: «Բորոխը» իրանահայութեան միակ թերթն էր, որ սուր ու դիպուկ կերպով քննադատում էր համայնքում տեղ գտած կեղծ, մեծամիտ, շահամոլ տարրերին:

1927, 1929 եւ 1930 թականներին նա մեծ գոհողութեամբ եւ ջանադրութեամբ հրապարակում է «Պարսկահայ տարեգիրք» մեծածաւալ հատորները եւ ապա 1930-ին հիմնում է «Վերածնունդ» շաբաթաթերթը, որը երկրորդ աշխարհամարտի ժամանակ դարձաւ օրաթերթ:

Հետաքրքիր է, այստեղ արձանագրեմ, որ Անգլո - Իրանեան Նաւթային Ընկերութիւնը, ուր ծառայում էր նա, առաջարկում է Հ. Գարագաշին՝ հրաժարել թերթի հրատարակութիւնից կամ իր պաշտօնից, առարկելով, թէ մեր պաշտօնեան չպիտի քաղաքական թերթի խմբագիր լինի: Հայկը հրաժարում է իր ապահով պաշտօնից եւ գերադասում է հայ մամուլի դժարին, փշոտ ճանապարհը:

Այդ տարիներին, ես եւս ներքաշուել էի արդէն նրա գրական

աշխատանքի ոլորտը: «Բորոխի» համար Ֆրանսերէն թերթերից թարգմանութիւններ էի անում եւ սկսեակիս յաջող թերթածրքը, առաջին անգամ, հրատարակել է 1930-ի «Պարսկահայ տարեգրքում»:

«Վերածնունդ»-ի խմբագիր Հայկ Գարագաշը իր հասարակական գործունեութեան ընթացքում դարբնել եւ կերտել էր ռալիստական մի աշխարհայեացք, միաժամանակ հանդիսանում էր առողջ գաղափարների աներկիւղ դրօշակակիրը: Այդ հասկացողութեամբ էլ, նա անվախ մերկացրել եւ պայքար է տարել Երուսայում հրապարակելիւ Ֆաշիզմի դէմ:

Արեւմտեան Երուսայի պետութիւնները հայ ժողովրդի ազատագրական պայքարում, բացի կեղծ խոստումներից ոչ մի օժանդակութիւն ցոյց չտուցին եւ յօգուտ իրենց քաղաքական, տնտեսական շահերի խարեցին հայութեանը:

Հայկ Գարագաշը հաւատում էր, որ հայ ժողովրդի փրկութեան ուղին՝ ժողովուրդների եղբայրութեան լուսատր ճանապարհն է:

Հայկ Գարագաշը 1933-ին, գործի քերտումով, երեքամսեայ ճամբորդութիւն ունեցաւ Հնդկաստան: «Վերածնունդ-Բորոխ»-ի խմբագրութիւնը յանձնեց իր աշխատակիցներ՝ Դեհին, Հր. Ֆալեանին, Չ. Միրզայեանին եւ Գ. Խանենցին: Այդ ընթացքում «Վերածնունդը» դարձաւ երիտասարդ գրողների օրգան: «Նոր էջ» վերտառութեամբ բաժին բացեցինք գրական - գեղարեստական գրողների համար: Ապագայում այդ անունով կեանքի կոչեց «Նոր էջ» գրական խմբակը իր պարբերական հրատարակութիւններով, բոլորովին անկախ «Վերածնունդ» շաբաթաթերթից:

Ջանիկ Չաքրըրը 1955 թականին Ամերիկայից Թեհրան է գալիս վերակազմելու Հ.Բ.Ը.Միութիւնը: Այդ գործի համար առաջ է քաշում Հայկ Գարագաշին ու նրան է յանձնում միութեան քարտուղարութիւնը: Կազմակերպում է երիտասարդական մասնաճիւղ, որտեղ մասնակցում են «Նոր էջական» խմբակը եւ նախկին «Կապոյտ» միութեան անդամները:

Այստեղ հարկ է ասել, որ 1923 թականին աշակերտական «Կապոյտ» միութիւնը Հայկ Գարա-



գաշին, Դեից յետոյ, ընդունեց որպէս դեկավար:

Մեր «Կապոյտ» միութեան պատանհներս, որեւէ ձեռով փոխարինելու համար մեր դեկավարի անձներ, անշահախնդիր հոգատարութեանը մեր հանդէպ, որոշեցինք օգնել նրան «Բորոխ» զաւէտաթերթի ցրելու աշխատանքի մէջ: Ես, Գուրգէնը եւ Վաղինակը, թերթի լոյս տեսնելու օրերին, հաւաքում էինք խմբագրատուն, ծալում, կապում, հասցեագրում կապոցները եւ տանում փոստին յանձնում:

Երկրի բռնապետ՝ Ռեզա Շահի հրամանագրով 1936-ին փակում են հայոց դպրոցները: Հայ աշակերտութիւնը գրկում է մայրենի լեզվի դաստանդումից: Հայկական ազգային կեանքը փոքորկում է: Հայկ Գարագաշի դեկավարութեամբ Հ. Բ. Ը. Միութեան Երիտասարդական բաժանմունքը գործի է անցնում: Հայերէն լեզվի դասընթացներ են կազմակերպւում անպաշտօն, գաղտնի կերպով:

Վերջապէս 1939-ին, պայթում է երկրորդ համաշխարհային պատերազմը: Անգլիական բանակը հարաւից եւ Սովետականը հիւսիսից 1941-ին մտնում են Իրան, երկրի գերմանատէր դիկտատոր՝ Ռեզա Շահին հրաժարեցնում եւ արքայում են: Իրանահայ կեանքում եւս մեծ փոփոխութիւններ են տեղի ունենում: «Վերածնունդ»-ը դառնում է օրաթերթ: Հայկ Գարագաշը իր համակիր՝ ճախ հոսանքի հետ, նախաձեռնում եւ վերաբացում են հայկական դպրոցները: Մտեղծում է ազգային գաղափարական ազատ, աշխոյժ կեանք:

لاستيك سازي آموس  
جاده آبعلي خيابان  
سازمان آب خيابان  
پنجم شيدايي نيش دوم  
جنوبي پلاك ۳۰

Հայկ Գարագաշի «Բորոխ» եւ «Վերածնունդ» թերթերը եղել են Իրանի դեմոկրատ խաւերի՝ հայ առաջադէմ մտադրականութեան արտայայտութեան ամբիոնները:

«Վերածնունդ»-ի գործունէութիւնը առանձնապէս շեշտեց երկրորդ աշխարհամարտի ժամանակ: Պարսկական առաջադէմ թերթերի շարքին նա նույնպէս իր էջերը բացեց լայնօրէն Ֆաշիզմի դէմ կռուող դաշնակից ժողովրդների յաղթանակին նպաստելու գործի համար:

«Վերածնունդ»-ի էջերը լեցուն են եղել Հայաստանի վերածնութեան բոլոր մարզերին վերաբերող նիւթերով եւ գրականութեամբ: Դա զմահատելի աշխատանք է համարում սփիւռքահայութեանը մշակութապէս իր մայր հայրենիքին կապելու տեսակէտից:

«Վերածնունդ»-ը յանձինս իր խմբագրի, Իրանի հողը իր ոտքի տակ հարազատ զգալով, առաջնակարգ խնդիր է համարել այս երկրի ժողովրդների համերաշխութիւնն ու յառաջադիմութիւնը: Նա առաջիններից մէկն է եղել, որ անհրաժեշտութիւն է համարել՝ կատարելապէս սովորել եւ սիրել պարսկերէն՝ պետական լեզուն եւ ծանօթանալ Իրանի մշակութային կեանքին, ծանօթանալ նրա աշխարհաեռչակ հին ու նոր գրողների հետ եւ զանգուածաբար կապել պարսիկ ժողովրդի ազատագրական պայքարին:

Հայ գրականութեան պատմութեան մէջ նշանակալից մի երեւոյթ էր Հայաստանի գրողների Բ համագումարը, որ տեղի ունեցաւ 1946 թականի սեպտեմբերին Երեւանում, որի բացումը կատարեց Գրողների Միութեան նախագահ՝ Աւետիք Իսահակեանը:

Իր բնոյթով համագումարն ուշազգրաւ է եղել, որ իր դրօշի ներքոյ առաջին անգամ համախմբել է ոչ միայն Հայաստանի եւ Խորհրդային Միութեան գրողներին, այլեւ արտասահմանի առաջադէմ գրչի մշակներին:

Համագումարին Իրանից հրաւերով մասնակցել են երեք հոգի՝ Հայկ Գարագաշը, Արամ Երեմեանը եւ Յով. Գուկասեանը: «Վերածնունդ» օրաթերթի խմբագրութիւնը, Հ. Գարագաշի բացակայութեան ժամանակ

յանձն առան՝ Ջօրիկ Միզայեանը եւ տողերիս գրողը՝ Գ. Խանենցը:

Հայկ Գարագաշը բացի իր թերթերի դժարին աշխատանքից, ժամանակ էր գտնում թարգմանելու օտար գրականութիւնից գոհարներ, ինչպէս Փիեռ Լուիի «Պիլիդիսի երգերը», որը հրատարակել է 1928 թականին: Մեր հայ գրականութեան գլուխ գործոցները սքանչելի լեզով պարսկերէնի է թարգմանել, որոնց մի մասը միայն, Ա. Շիրանզադէի «Ռ՞ու է նրա մայրը», Նար Դոսի «Ես ու նա», Յ.Թումանեանի «Գիքորը» եւ Ռուբէն Սեւակից չորս պատմւածքներ, հրատարակեցին 1957 թականին «Հայկական պատմածքներ» անունով, փառակազմ հատորով: Պարսիկ գրաքննադատները, այս հատորի վրայ հիմնելով, փառաբանեցին հայ գրականութիւնը:

Նացիզմն ու Ֆաշիզմը տապալելուց յետոյ, Իրանում գտնուող դաշնակիցների զօրքերը հեռուցեցին հեռացան երկրից եւ դարձեալ 1952-ից բռնապետական կարգերը վերահաստատեցին: «Վերածնունդ»-ի մրագրատունը պայթեցրին: Թերթի հրատարակումը դադարեցեց: Անկուսակցական Հայկ Գարագաշին մատնեցին, որպէս Կոմունիստական (Թուրք) կուսակցութեան անդամի: Այդ յանցանքով ձերբակալեցին նրան եւ շուրջ եօթ ամիս բանտում մնաց մինչեւ քննութիւնները ապացուցեցին, որ նա կուսակցական չի եղել: Նա հիւժուած ու քայքայած ազատ արձակեց բանտից եւ շուտով, յաւերժաբար աչքերը փակեց 1960-ի մայիսի 2-ին:

Հայկ Գարագաշը նւիրեց իր կեանքը, գոհարեցեց ապահով պաշտօնը, դիրքը, հարստութիւնը եւ հանգիստը, յանուն հայ ժողովրդի շահերի պաշտպանութեան:

Տարիներ են անցել նրա մահանից, սակայն նա միշտ էլ կենդանի է իրանահայութեան համար:

Մարմինը չէ, որ մարդ ենք կոչում, այլ՝ միտքը, հոգին, գաղափարը: Անհատի նկարագիրն ու անձնատրութիւնն է, որ յարգում ու սիրում ենք եւ ոչ՝ նրա երեւոյթը:





### Նամականի

Սիրելի պրն. Էդիկ Բաղդասարեան,  
խմբագիր «Լոյս» երկշաբաթաթերթի,

Մի քանի օր առաջ, ուրախութեամբ ստացանք Ձեր նոր հրատարակած «Լոյս» երկշաբաթաթերթը, որի համար յայտնում են ջերմ շնորհակալութիւններս եւ ներփակում գրադարանի ստացման թերթիկը:

Ջերմօրէն շնորհաւորում են Ձեզ, դրա լոյս ընծայման առթիւ, ինձ մեծ ուրախութիւն պատճառեց նաեւ այն փաստը, որ տպագրել է Մետրոպեան ուղղագրութեամբ: Մետրոպ Մաշտոցի յիշատակը միշտ վառ պիտի մնայ մեր սրտերում:

Նորանոր յաջողութիւնների մաղթանքներով՝

Լեւոն Գ. Մինասեան  
Նոր Զուղա, 29 մարտի, 2000 թ.

### Ապրիլ 24

Դարձեալ Ապրիլ է՝ ապրելու ամիս, Որը նոր շունչ է բուրդիս տալիս, Տաքն է գալիս՝ ցուրտը չքանում Ու մարդու սրտում նոր յոյսեր ծնում:

Բայց հայի համար այդ յոյսը չեկաւ, Գարնան օրերը ցաւ ու վիշտ

դարձաւ, Մութի մէջ սրեց եաթաղանը բիրտ, Ու հային բերեց միայն ցաւ ու վիշտ:

Ոճրագործ թուրքը՝ իր չար խորհրդով, Ու անմարդկային իր վատ արարքով, Որոշեց ազնիւ մի ամբողջ ցեղ ջնջել, Ու միայն մէկը թանգարանում թողնել

Թէեւ այդ օրից տարիներ են անցել, Երբ թուրք ազգը որոշեց հային

կոտորել, Բայց հայը կայ ու ապրում է դեռ, Ու պիտի ապրի եւ մնայ անմեռ:

Ինչքան էլ անցնի այդ տխուր օրից, Հայը ձեռք չի քաշի իր պայքարից, Հայ Դատը երբեք չի մոռացւելու, Եւ միշտ պատրաստ է շարունակելու:

Մինչեւ պատժի ռոտին ոճրագործ, Եւ ընդունի իր արարքը շարագործ, Հատուցի հային իր իրատուը, Ու վերականգնի հայ ազգի փառքը:

Լ.Գ.Ս.  
Նոր Զուղա 21.03.2000 թ.

### 1900 ԵՆ 15

Գայեանէ Աբգարեան

1900 ԵՆ 15, ապրիլի 24.  
Աստու՛ Սուրբ Աջի փոխաբերում  
Հայոց երկնից կախուցին.  
Մի կեռ եաթաղան,  
Արնախում վրան եւ ...  
Չանգեր անխօս:

1900 ԵՆ 15 թական.  
Իմ հէզ ժողովուրդ,  
Այս անգամ ես  
Գոյատեւելուդ կանքն  
աստուածատուր,  
Շարժեց նախանձը ծարաւ

թշնամուր,  
Որն համակելով ցեղը ջնջելու  
Պիղծ ձգտումներով,  
Չգեց արիւնտա վրանը  
Հայոց ջինջ երկնականարով.  
Եւ Արարի՛ չը, Արարի՛ չն անգամ  
Չօրու չդարձաւ,  
Սաստելու վայրագ մարդաքաղհանը  
Քոռ եաթաղանի,  
Որի սարսափից զանգերն անլեզու  
Չանգում էին, զանգ՛ում,  
Սակայն ... չէին զկգում:

Երկնայի՛ն վկայ, տեսա՞ր, թէ ինչպէս  
Այդ եղերական դժոխքն երկրային  
Իր արիւնատենչ հրէ կաթայում  
Կիսակրակո՛ւ մոխրացրեց ազգիս,  
Իսկ փոթորիկներն անհրաւ դարի,  
Բուռ-բուռ անելով մոխիրն այդ

դժգոյն,  
Փոեցին լայնքով համը աշխարհի:

Տէ՛ր, իմ Չօրաւոր,  
Գիտե՛ն, այքաթող անել չէիր կարող.  
Եւ այդ էր պատճառ,  
Որ նահատակած սուրբ  
մարմինների  
Մոխիրն այդ մխող,  
Ամէն մի հողում, ուր կեանք էր

չողում,  
Մի բուռ պաղ ջրից յառնեց վերստին՝  
Տարով աշխարհին Հայ Պանդուխտի

Ծիւ.  
Ծիւերն այդ դարձան ցօղուն, յետոյ՝

ծառ,  
Ժտուղ տեցին հողերում օտար,  
Թափուցին, կերւան, բայց ...  
մնացին Հա՛յ:

Աստա՛ծ Ամենայն,

Իմ երախտիքի խօսքն են ես ուզում  
Այսօր Քեզ յղել,  
Որ ապրելու եւ յարատեւելու  
Կանքն ես մեզ տուել,  
Այնպէս, որ կանգնած շեմին  
Նորաբաց հազարամեակի,  
Ետագոյն դրօշն է միակ զարդը  
Հայոց երկնքի,  
Եւ որ երկինքներ խոյացած զանգերն  
Հայ եկեղեցու,  
Օտար հողում իսկ հայո՛ց են  
կանչում,  
Հայո՛ց դօղանջում:

Իմ վեհ ժողովուրդ . ծածկի տակ այս  
լուրթ,  
Քո սրտից բխող աղօթք ունեն սուրբ.

«Հա՛յր մեր երկնաւոր,  
Դ՛ո՛ւ, որ տւել ես շնորհն իմ ազգի  
զոյատեւումի,  
Որն եղեռնացած մոխրից անգամ  
կրկին կյառնի,  
Յղացրո՛ւ հայոց արգանդն  
հանճարով նորածին դարի,  
Մաշտոցեան ոգով պարտորի հոգին  
նորեկ հանճարի,  
Որ գօրու լինի գրելու տառերն Հայոց  
Միութեան,  
Որոնք նորդարեան այս լուսաբացին  
Չօնեն բառերն Հայ Միաբանութեան,  
Որ անցեալ դարի վշտից ճառագած  
աստղերն այս ցրած,  
Չուլեն իրար հետ եւ լուսաւորեն  
հողն Հայաստանեաց:  
Ամէն:»:

### «Լոյս»ին

Արմենուհի  
Մինանեան

Գարուն է եկել  
Ու գարնան կանչով  
«Լոյսը» իր ոսկէ  
Շողերն է փռել:  
Քո զալը բարի  
Գարուն ցանկալի.  
Ու  
Գալը բարի  
«Լոյս»՝ Ապագայի:

2000 թ., գարուն



# Մտահոգութիւն

Վ. Վաչագան

Աշնան ցուրտ օրերից մէկն էր, թաղի հայկական դպրոցի մուտքի մօտ ծնողներով հաւաքել ենք եւ սպասում դպրոցի զանգին, որպէսզի մեր զաւակներին տուն տանենք:

Նման դէպքերում մարդիկ առհասարակ գրոյցի են բռնում: Ես այդ օրը հանդիպեցի իմ վաղեմի ծանօթներից մէկին: Առաջին իսկ հայեացքից նկատեցի, որ բարեկամիս դէմքին մեծ թախիծ կայ: Նրա որպիսութիւնն են հարցնում:

-Է՛հ բարեկամս, մի կերպ ապրում ենք էլի:

-Այսի՞նքն:

-Էհ, ձեռք ես առել, կեանք է էլի, ապրում ենք:

Ասում են.

-Ապրելը այդ, ապրում ենք: Հարցը նրանում է, թէ ո՞նց ենք ապրում:

-Մի կերպ քարշ ենք գալիս էլի: Որ հանգիստ թողնեն՝ կապրենք:

-Ո՞վ է խանգարողը: Ի՞նչ ասել է՝ «Որ հանգիստ թողնեն, կապրենք», - դիմում են նրան,- կարծես ինչ-որ բաներ ունես ասելու:

-Մի անուանիք «ինչ-որ բաներ», ասա՛ ինչ-որ ցատեր, ինչ-որ դժբախտութիւններ:

Հարցնում են.

-Ի՞նչ ցատերի մասին է խօսքը: Ասա՛, ես էլ իմանամ:

Չի պատասխանում: Նրա դէմքն այնպէս է մռայլում եւ այլայլում, որ մտածում ես կարող է, ինչ-որ վատ բան է պատահել նրան: Գլխով յուսահատական նշաններ է անում: Այտերը, ականջները եւ աչքերը կարմրում են: Կարծես պատրաստում է կռելու: Ես մի պահ նկատելով այդ երեւոյթը լռում եմ: Հետզհետեւ, բարեբախտաբար, նրա դէմքի վրայ երեւում են հանդարտման նշաններ: Վերջապէս մի արհեստական ժպիտով, որ հազիւ էր նշմարում նրա դէմքին, լռութիւնն ասարտում է:

-Կներես, քեզ էլ անհանգստացրեցի: Մխր ես ինչ իրատուք ունեն ուրիշներին իմ վշտերով անհանգստացնելու:

-Դէհ, եղբայր,- ասում են,- հօնաւերդ չեն խորտակել, մի ասա տեսնենք ինչ է եղել:

-Դու իսկապէս ինչ անյարմար ժամանակ ես գտել: Մի կողմից իմ ներքին զայրոյթը, միւս կողմից այս անտէր ցուրտը, ինձանից խլել են մտածելու եւ խօսելու հնարաւորութիւնը:

Ի դէպ, ես էլ էի խիստ մքսում, հետեւաբար առաջարկեցի մեր տանը շարունակել խօսակցութիւնը:

-Չէ, բարեկամս,- ասում է նա,- մեր տունը մօտ է դպրոցին, յետոյ մենք ահագին ճանապարհ կտրենք, ու հասնենք ձեր տուն, եւ ընդամենը իմ պատճառով: Աւելի լաւ է գնանք մեզ մօտ, այնտեղից էլ կտեղեկացնենք ընտանիքիդ:

Համաձայնում են, մտածելով, որ եթէ առարկեմ, պիտի ձեռնունայն տուն վերադառնամ:

Արդէն նրա յարկի տակ ենք: Հարցական նայում են նրան: Նա հասկանում է:

-Դէհ, հիմա ասա, որ մէկ դարդս պատմեմ: Առաջին մտահոգութիւնս հէնց այս՝ մեր թաղի դպրոցի հարցն է: Գիտե՞ս ինչ են լսել: Ուզում եմ փակել մեր թաղի դպրոցը: Դա զիտե՞ս ինչ է նշանակում:

Ասում են մախ դա նորութիւն չէ: Յետոյ ասում են՝ իբրեւ թէ անկախ իրենց կամքից է այդպէս ստացում: Քանի որ իրանահայութեան ընդհանուր թիւն է նուազում, հետեւաբար նուազում է նաեւ աշակերտութեան թիւը: Ուրեմն, պարտադրաբար պիտի կրճատեն հայկական դպրոցների թիւը:

-Եթէ նոյնիսկ ընդունենք այդ բոլորը, ինչո՞ւ կրճատումը մեր քաղաքամասից պիտի լինի: Չէ, եղբայր, աղբիւրն ակունքից է պղտորել: Գիտե՞ս ինչ, մեզ միշտ նայել են «վերելից»: Իհարկէ, եթէ բարեհաճեն նայելու:

-Չե՞ս կարծում ասածիդ մեջ չափազանցութիւն կայ,- հարցնում են նրան:

-Եթէ դու էլ ունենայիր իմ փորձը, այսօր նման հարց չէիր տայ: Կուզե՞ս մի քանի օրինակ բերեմ այդ փորձառութիւնից:

-Մեծ ցանկութեամբ եւ անմեայն համբերութեամբ,- պատասխանում են ես:

-Դէհ, ուրեմն լսիր: Երբ տարրական ասարտեցի, վկայականս ձեռքիս, ուսուցչուհի մօրս ուղեկցութեամբ դիմեցի մէկ այլ թաղում գտնուող մի հայկական դպրոցի՝ արձանագրելու եւ ուսումնաշարունակելու համար: Ի դէպ, մեր թաղի դպրոցը ուներ միայն տարրական կրթաբաժին: Քարտուղարը մօրիցս պահանջեց մի որոշակի գումար՝ որպէս թօշակ: Մեր ունեցած գումարը չէր բաւարարում, բայց ընդամենը պակասում էր 10 թուման: Մեզ մերժեցին, մեր արժանապատուութիւնը ոտնահարելով: Դպրոցի «հայ» տեսուչը մօրս դիմելով ասաց.

-Տիկին մենք չենք կարող ամէն մի մօտեցողի խղճանք, եւ յետոյ, դուք ինչո՞ւ էք ձեր զաւակին «ու ազգային» դպրոց ուղարկել:

Այդ «քառակուսի» ուղեղով անձի կարծիքով մեր թաղի հայկական դպրոցը «ու ազգային» էր համարում: Մայրս մի կերպ զսպելով իր զայրոյթը ասաց.

-Պարոն տեսուչ, ես իմ ամբողջ կեանքում ապրելով հեռուոր գաւառում ընդունել եմ հարիւրատր հայ մանուկների եւ նրանց դասաւանդել մայրենի լեզուն՝ առանց որեւէ նիւթական ակնկալիքի: Իսկ դուք այսօր մի երեխայի գրկում էք հայկական դպրոցում ուսումը շարունակելու բախտից, ընդամենը 10 թումանի համար: Վայ մեր ազգին, որ ձեզ նման առաջնորդներ պիտի ունենայ:

Գիտե՞ս ինչ պատասխանեց այդ ապուշը:

-Տիկին, չեմ հաւատում, այլապէս ձեր զաւակին չէիք ուղարկի այդ դպրոցը:

Մայրս պայտասակից հանեց իր փաստաթղթերը եւ ստացած գնահատագրերը, որոնք յուել էին թեմակալ առաջնորդների անունից: Նա մեկնելով թղթերը ասաց.

-Մրանք փաստաթղթեր են, որոնք վկայում են, թէ իմ ասածները ինչքանով են ճիշտ: Իսկ դուք, զոնէ ձեր խղճի դիմաց, պիտի պատասխան տաք: Իհարկէ, եթէ խիղճ ասած բանը ձեզ մօտ գոյութիւն ունենայ:

Թէկուզ ինձ չարձանագրեցին, եւ դա մեծ ցաւ դարձաւ իմ սրտին, բայց մօրս տաած տեղին պատասխանը ինձ համար եղաւ մխիթարանք:

Շար. պարսկ. բաժնի էջ 10



### ԲԵԿԻԱՑ ՍԻՐՏԸ ԿԱՐԿԱՏԵԼՈՒ ՌԻԴԻՆԵՐ

**ՄԻ ԻԼԵՐՈՒԹՅԱՆ  
ՖԱԶՈՒԴՈՒԹՅԱՆ  
ՊԱՐԱՄՈՒԹՅԱՆ ՍՐՊԻ  
ԲՈՒԺՈՒՄՆԵՐ ԳԵՆԵՐԻ  
ՕԳՈՒԹՅԱՆՔ  
ԲԺԻՇԿՆԵՐՆԵՐ ԿԱՆԲԱՅ  
ԵՆ ԽԱՐՈՒՄ  
ԱՐՊԻՆ  
ԱՍՎՈՐՆԵՐՆԵՐՈՒ,  
ԹԵ ԻՆՅԵԿՏԻՆ ԻՆՔԻ  
ԻՐՆԻ ԲՈՒԺԻ**

*Չեկուցող՝ Ալիս Պարկ  
Թայմ Շաբաթաթերթ*

*Նոյ. 22, 1999 թ.  
Թարգմանիչ՝  
Լևոն Ախարոնյան*


Ամեն տարի 400,000 ամերիկացիներ ենթարկվում են սրտի շնչերակների պատաստման գործողության (Coronery- Artery Bypass ) որպեսզի արհիւնը շրջանցի բռնած երակները եւ հասնի սրտի բոլոր մասերին: Եւս 500,000 այլ հիւանդներ ընտրում են մի ուրիշ գործընթաց, որը կոչւում է անգիո-պլաստիկ ( Angioplasty ) որով նորը փուչիկներ տեղադրւում են երակների խցում կէտերում և փուչիկների մէջ օդ սրսկելով բացում են արեան հոսանքի ճանապարհ: Այն անհատները, որոնք իրենց ենթարկում են այս գործողութիւններին մոլեգնօրէն ճիշտում են մեն մի նպատակի՝ ստեղծել կեանքը շարունակելու մի երկրորդ պատեհութիւն: Սակայն արդիւնքը, սովորաբար, ժամանակաւոր բնոյթ ունի: Պատաստում կամ վերաբացում երակները կրկին խցում են: Տեւալները ցոյց են տալիս, որ հիւանդների 10-ից 1-ի սիրտը այնքան շատ է սպիւստանում, որ այլևս չի կարելի որևէ բան անել:

Սակայն, բում է, թէ այս տխուր հետանկարը փոխելու վրայ է: Գիտնականները փորձարկում են մի նոր միջոց՝ հիմնւած գեներով բուժման վրայ, որն է յորդորել որ սիրտն ինքն աճեցնի նոր երակներ, փոխարինելու համար հին և մաշ-ւած

երակներին: Այս գործընթացը կիրառող բժիշկները օրէօր աւելի են ոգևորւում ստացւած արդիւնքներով: Նրանց յաջողութեան զեկույցները, անցնող տարւայ ընթացքում լայն տարածում են գտել գիտական համայնքում: Բայց թէ որքան են առաջացել այս մարզում, յայտնի դարձաւ այն բանից յետոյ, երբ առաջատար գիտահետազոտողներ անցեալ շաբաթ ի մի հակաբեցին Ատլանտա քաղաքում գումարած գիտական հաւաքում, որին բացառիկ արտօնութեամբ մասնակից եղան Թայմ շաբաթաթերթի թղթակիցը: Նորթ Վեստլոն համալսարանի բժշկական ֆակուլտատի բժիշկ՝ Թոմ Ռոզենգարտն ասում է, « Բանի որ մեր նպատակն է արեան հոսքը սրտին հայթայթելու մի այլ ուղի փնտրել և գտնելն է, մենք մեր քայլերն ուղղել ենք հասնելու այն ելքին որ կը յանգեցնի սրտի երկարաժամկէտ բուժմանը»:

1000 հիւանդ, 50 տարբեր կենտրոններում, արդէն ենթարկել են այս փորձնական բուժման եղանակին: Բուժումները, մեծ մասամբ կատարել են ամերիկացի Բայթաթ կամ անգիօպլաստի հետ միաստեղ: Նախնական արդիւնքները այնչափ յուսադրելի են եղել, որ բժիշկներն այժմ սկսել են բուժման այս նոր եղանակն առաջադրել այն հիւանդներին<sup>1</sup>, որոնք այլևս ի վիճակի չեն ամերիկացի միջոցառումներով բժշկելու: Դեռ կան շատ անպատասխան մնացած հարցեր և մի բանի հիւանդներ մահացել են ( Չմայած որ գիտաշխատողները պնդում են, թէ մահացութիւնները հետևանք չեն այս բուժման ձևի ) : Այսուհանդերձ, եթէ նոր բուժումը յաջողի իրեն արդարացնել, սրտի հիւանդութեամբ առաջադող հազարաւոր կանայք և տղամարդիկ, կկարողանան ինքնուրոյն բուժել:

Վաղուց ի վեր յայտնի է եղել բժիշկներին, որ ի պատասխան թրածնով հարուստ արեան ծաւալի անկման, սիրտը սկսում է նոր և



յաւելեալ երակներ աճեցնել: Բայց, այս գործընթացը, որն կոչւում է անգիօգենեալիս ( angio= երակ, գենե-սիս= ծնունդ) յաճախ դանդաղ է և ոչ-շատ տարածուն, սրտի կաթւածը կանխելու համար:

Շուրջ տաս տարի է, ինչ գիտնականները սկսել են յայտնաբերել աճման ազդակ (growthfactor) կոչւող որոշ պրոտէիններ, որոնք օգտա-գործում են մարմնի կողմից նոր արհւնատար անօթներ գոյացնելու համար:

Այս պրոտէինները շինարարական վերսկիչների պէս ստուգում են, որ ամէն ինչ դիւրին ընթանայ:

Կենդանիների վրայ կատարւած փորձարքները ցոյց են տւել աճման ազդակները սրտի մկանցի հասցնելու երեք ուղի կայ:

Գիտնականները աշխատում են սրտին մղել ինքնաստուգման. սրտի մէջ սրսկելով գեներ կամ պրոտէիններ, որոնք խթանում են նոր արհւնատար խողովակների կազմելուն սրտում:

Այս ուղղութեամբ ուսումնասիրում են երեք մեթոդներ՝

**ՎԻՐՈՒՄ**- Աճման ազդակի գենը, միակցւած մասամբ անակտիւացւած մի վիրուսի սրսկւում է սրտի մկանային բճիճների մէջ:

Վիրուսը, ամենայն դէպս, վարակ չի առաջացնում:

*-Այդ հիւանդներից մէկը՝ Լանս Սօրօն, սրան յաջորդող յօդածում իր իսկ լեզուով պատմում է գենոտերապիայի միջոցով իր բուժման մասին: Յօդածոյ ընթերցումը խիստ յանձնարելի է մեր ընթերցողներին: Լ.Ա.*

ՄԵՐԿ ԳՆԱ (Desoxyribonucleic Acid):

Աճման ազդակի գեներ նմանապես կարելի է սրկել մերկ, այն է առանց վիրուսի միակցելու: Թույլ է, թե սրտի մկանային բժիճները առակ են ընդունելու մերկացած ԳՆԱ (հնագեն)ը:

ՊՐՈՏԵԻՆ - կամ նոյն ինքն աճման ազդակը, պրոտեինի կերպարանքով, նոյնպես կարելի է սրկել սրտի մէջ: Սոյն մետոդը աւելի քիչ նախապատրաստական քայլերի կարիք ունի, սակայն պրոտեինները առաւել արագ են տարանջատում քան գենները, որով անհրաժեշտ է դառնում սրկման յաճախակի կրկնութիւնը:

Կարելի է մի գեն սրկել, առանձին կամ վիրուսով ծրարած, որն սրտի մկանին թելադրում է թէ ինչպէս գոյացնի աճման ազդակը: Կամ էլ կարելի է կրճատել գենը և պարզապէս զործարկել աճման ազդակ պրոտեինը: Գենոտրասպիայի առաւելութիւնը կայանում է նրանում որ բաւական է միայն մէկ անգամ դիմել այդ քայլին, որից յետոյ գենը կը շարունակի աճման ազդակ գոյացնել:

Թէև միայնակ պրոտեինի (կամ աճման ազդակի) գործածութիւնը հնարատրութիւն է տալիս ճշգրիտ հսկողութիւն ունենալ, սակայն ունի այն անպատեհութիւնը, որ հարկ է լինում սրկումները կրկնել քանի ամիսը մէկ յաճախակաւութեամբ:

Անկախ այն բանից, թէ գենն է օգտագործում կամ պրոտեինը, նպատակը միևնոյնն է՝ սիրտը ծածկել բազմաթիւ մանր երակներով: Այստեղ արժի նշել, զարմանալից այն է, որ մեծ թով մանր երակներ սնուցանում են սրտի մի աւելի խոշոր մաս քան թէ մի քանի մեծ երակներ: Բայց դա առաջ է բերում մէկ այլ խնդիր: Նոր կազմաւորած երակներն անչափ մանր են լինում, որ հնարատր չէ դրանք յայտնաբերել ամենաարդիական սարքատրումներով անգամ: Հետևաբար, որևէ օբյեկտիւ ապացոյց չկայ հաստատելու, որ անգիօ-գենետիսը բարե-

լաւում է արեան հարցը սրտի մկաններում:

Այսուհանդերձ, ուրիշ շատ նշաններ ազդարարում են, թէ ինչ-որ մի լաւ բան տեղի է ունենում, հիւանդներն աւելի սակաւ կրծքավանդակի ցաւեր են ունենում (անգիմա) և աւելի երկար են կարողանում քայլել/ազել Տրեդ-միլ <sup>2</sup> (treadmill)-ի վրայ:

Այս կենսարար լուրերը, յուսադրիչ լինելով հանդերձ, չեն բաւարարում բժիշկներին (Դեռ չենք խօսում ԱՄՆ-ի Սննդի և Գեղերի Վարչութեան (FDA) համոզելու մասին, դրանց արդիւնատրութեան առընչութեամբ):

Գիտահետազօտողները, ամենայն դէպս համոզուած են, յայտնաբերող տեխնոլոգիայի զարգացումով շուտով կարելի կը լինի նշմարել այդ մանր, նոր երակները, որոնց գոյութեանը հաւատում են նրանք:

Մինչ այդ, անգիօ-գենետիսով բուժումը թում է մի նոր առիթ կրնդձեռնի օրրաստօրէ թով աճող հիւանդներին, որոնք կարծում էին, թէ սպառել են բուժման բոլոր կարելիութիւնները: Ինչպէս սրտի հիւանդութեանը տառապող որևէ անհատ ձեզ կասի, դա երբեմն այն միակ բանն է, ինչին կարիք ունէք դուք:



- Սարքաւորում, որ բաղկացած է մի անւազոտուց, ամրացւած 2 մետր միմիանցից հեռու պտտող երկու առանցքների, որ ելեկտրական հոսանքի միջոցով գոտին շարժում է ցանկացած արագութեամբ և զանոնիվեր աստիճանով: Բժշկի հսկողութեան ներքոյ, հիւանդը սկսում է սկզբում քայլել դանդաղ, ապա աւելի և աւելի արագ: Ենթակայի կրծքավանդակին յատուկ լարերով միացւած մէկ այլ սարքաւորում ցոյց է տալիս սրտի բարախման դիագրամը: Տրեդմիլի միջոցով բժշկը չափում է ենթակայի սրտի աշխատունակութիւնը: Լ.Ա.

# Ապրէք Առողջ

Դոկտ.Ռ. Սարգսեան

## Տարեց մարդկանց մօտ գիշերային յաճախամիզութեան եւ արեան բարձր ճնշման յարաբերութիւնը

Գիշերային յաճախամիզութիւնը տարածուած է տարեց մարդկանց մօտ: 24 ժամայ ընթացքում կեանքի ռիթմը այնպէս է փոխում, որ գիշերայ մեզի արտադրութիւնը աւելի է շատանում: Յաճախ այս յաճախամիզութեան համար բժիշկները նրանց պրոստատի վիրահատութեան համար ուղարկում են մասնագէտի մօտ: Գործողութիւնից յետոյ այս հիւանդութեան նշանները՝ յաճախամիզութիւնը, չի վերանում: Այս հիւանդների համար մեզարտադրութիւնը արգելակող դեղորայքի օգտագործումը արգելւած է ու վտանգաւոր: Կարելի է օգտուել միզամուղ դեղորայքից:

Հետազօտութիւնները ցոյց են տալիս, որ մնան գիշերային և ցերեկային յաճախամիզութիւնը մեծ մասամբ պայմանաւորուած է արեան բարձր ճնշման հետ:


## Նոր յոյսեր ասթմայով հիւանդների համար

Ասթմայով հիւանդների մի մասը ստիպւած է օգտագործել կորտիկոստերոիդներ (ժողովրդի մօտ տարածուած՝ կորտոն), որոնց երկարատև և մեծ դոզաներով օգտագործումը կարող է բացասական հետեւանքներ ունենալ: Վերջերս, փորձեր են արւում մի նոր դեղամիջոց պատրաստելու համար, որը կոչւում է rhu MAb-E25, սա մի հակա IgE դեղորայք է և իր փորձնական շրջանում է գտնւում: Մինչ այժմ եղած տեւալների համաձայն այս դեղամիջոցը դրական է ազդել: Յաջողութեան դէպքում հիւանդները կամ կարիք չեն ունենայ կորտոնների, կամ էլ շատ կը նազի դրանց օգտագործումը:



# Ձեր իրական վարքիքը

Դոկտ. Սայբել Բոյզեն  
թարգմանեց Վիոլետ Ջուակիսը  
(Քէշիշեան)  
«Բիդըրզ դայջըստ» ամսագրից  
յունուար, 2000 թ.



Ընկեր Միմոնը իրայատուկ մարդ է, ինքնատիպ, ուժեղ կամքի տեր եւ դժար է նրան ուրիշների հետ համեմատելը: Նա տառապում է տարբեր հիւանդութիւններով: Գանգատում է սրտից, արեան շրջանառութիւնը լուս է: Նա շատ է ծխել: Մէկ օր նրան հարցրեցի.

-Քանի՞ տարեկան ես:

Պատասխանեց.

-49:

-Գիտե՞ս, որ շատ ծխելը քո տարիքը անելի է բարձրացնում:

Մեր առողջութեանը հետեւելուց է կախում մեր իրական տարիքը:

Ես մի մեթոդ ունեմ, որը հիմնւած է վիճակագրութեան տեխնիկաների վրայ, որոնք կապւած են անելի քան 125 տարբեր առողջապահական գործօնների հետ:

Եթէ պատասխանէք հետեւեալ հարցերին, կարող էք հաշիւել ձեր իրական տարիքը:

1.Ի՞նչ է ձեր արեան ճնշման միջինը:

- ա) 90/65 – 120/81 ( հանէք 3 տարի )
- բ) 131/87 – 140/90 (զումարէք 1 տարի)
- գ) 141/91 – 150/95 (զումարէք 2 տարի)
- դ) 151/96–ից անելին (զումարէք 3 տարի)

2.Կանոնաւոր էք նախաճաշում:

- ա) Ծաբաթական 5 անգամ կամ անելի (հանէք կէս տարի)
- բ) Ծաբաթական 2-3 անգամ (զումարէք կէս տարի)
- գ) Ծաբաթական 2 անգամից պակաս (զումարէք մէկ տարի)

3.Հաշիւէք ձեր քնելու ժամերը՝ 24 ժամայ ընթացքում:

- ա) 6.5-7.5 ժամ (հանէք մէկ տարի)
- բ) 7.5-8.5 ժամ (հանէք կէս տարի)
- գ) 6.5 ժամից պակաս (զումարէք մէկ տարի)
- դ) Անելի քան 8.5 ժամ (զումարէք մէկ ու կէս տարի)

4.Վերջին 3 տարւայ ընթացքում օրական քանի՞ ժամ էք յատկացրել մարզանքին. օրինակ՝ քայլելուն:

- ա) Անելի քան 1.5 ժամ (հանէք մէկ ու կէս տարի)
- բ) Անելի քան 1 ժամ (հանէք մէկ տարի)
- գ) Անելի քան 20 րոպէ (հանէք կէս տարի)
- դ) 5-10 րոպէ (զումարէք կէս տարի)
- ե) 5 րոպէից պակաս (զումարէք մէկ տարի)
- զ) Բոլորովին (զումարէք մէկ ու կէս տարի)

5.Օրեկան ինչքա՞ն խմիչք (ալկոհոլ) էք օգտագործում: (Նշւած բերի մէկ միաւորը հաւասար է՝ 120 մգ. գինու, 350 մգ. գարեջրին կամ 60 մգ. ալկոհոլին)

- ա) 1 կամ 2՝ քառասուն տարեկանից բարձր (հանէք մէկ տարի)

բ)0.5–1՝ քառասուն տարեկանից բարձր տղամարդիկ եւ յիսուն տարեկանից բարձր տարիք ունեցող կանայք (հանէք 0.5 տարի)

գ)0–0.5՝ քառասուն տարեկանից ցածր տղամարդիկ (զումարէք մէկ տարի)

դ)0–0.5՝ յիսուն տարեկանից ցածր տարիք ունեցող տղամարդիկ եւ 1 – 2.5՝ յիսուն տարեկանից ցածր տարիք ունեցող կանայք (զումարէք մէկ տարի)

ե) Անելի քան 3 (զումարէք մէկ ու կէս տարի)

6.Օրեկան որքա՞ն էք միրգ օգտագործում:

ա) 4 անգամ կամ անել (հանէք մէկ տարի)

բ) Բոլորովին (զումարէք մէկ տարի)

7.Ձեր ծնողները քանի՞ տարի են ապրել:

ա) Անելի քան 75 տարի (հանէք մէկ ու կէս տարի)

բ) Միայն մայրը՝ անելի քան 75 տարի (հանէք մէկ տարի)

գ) Միայն հայրը՝ անելի քան 75 տարի (հանէք կէս տարի)

դ) 75 տարուց պակաս (զումարէք մէկ ու կէս տարի)

8.Ձեր ամուսնական կեանքը ի՞նչ վիճակում է:

ա)Ուրախ ամուսնական կեանքով օժտուած

տղամարդիկ (հանէք մէկ ու կէս տարի)

բ) Բաժանուած տղամարդիկ կամ այրի կանայք (զումարէք մէկ տարի)

գ) Բաժանուած կանայք (զումարէք երկու տարի)

դ) Չամուսնացած տղամարդիկ ( զումարէք երեք տարի)

9.Ամենկան մէկ անգամից անել հանդիպած ձեր ընկերների կամ բարեկամների թիւը:

ա) 6 հոգի (հանէք մէկ ու կէս տարի)

բ) 3 – 5 հոգի (հանէք մէկ տարի)

գ) 2 հոգի (հանէք կէս տարի)

դ) 0 (զումարէք երկու տարի)

10.Արդէօք շուն պահո՞ւմ էք տանը:

ա) Այո (հանէք կէս տարի)

Ձեր պատասխանների հիման վրայ հաշիւէք տարիները եւ հետեւեալ կարգով բազմապատկէք համապատասխան թուով:

Ձեր տարիքը՝	բազմապատկելու թիւը՝
40-ից վար	X 0.3
40	X 0.4
50	X 0.5
60	X 0.6
70	X 0.5
80	X 0.4
90	X 0.3

Վերջում ստացւած թիւը, լինի դրական, թէ՛ բացասական, անեացրէք ձեր ծննդեան քականին համապատասխան տարիքին եւ կստանաք ձեր իրական տարիքը:

Արդէօք ուրախ էք արդիւնքից: Հակառակ դէպքում, ձեզ խորհուրդ ենք տալիս նկատի առնել վերոյիշեալ կէտերը, որպէսզի հասնէք ձեր ցանկալի նպատակին:

Իսկ ընկեր Միմոնը թողեց ծխելը եւ կարգաւորեց իր սնունդը եւ մարզանքը: Նա երկու տարի առաջ ինձ զանգահարեց եւ յայտնեց, որ թոռնիկ է ունեցել: Իսկ ես հաճոյախօսեցի, թէ. «Դեռես այնքան չես ծերացել՝ պապիկ դառնալու համար»: